# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 29 (1779) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 30, 2016
VOLUME 36, NO. 29 (1779) SATURDAY, JULY 30, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Յայտարարութիւնը

Հայաստանի մէջ տիրող կացութեան առթիւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անցեալ շաբաթ հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, խոր մտահոգութիւն յայտնելով տեղի ունեցող իրադարձութիւններուն կապակցութեամբ, մանաւորաբար ոստիկանութեան կողմէ՝ իրենց խօսքի ու գումարման ազատութեան իրաւունքէն օգտուող ու նոյնիսկ պատահական քաղաքացիներու նկատմամբ սանձազերծած ահաբեկման, բռնութեան արարքներուն եւ մարդու տարրական իրաւունքներու ոտնահարման աղաղակող փաստերուն ի տես:

Հնչակեան Կուսակցութիւնը կը շեշտէ, որ ոստիկանական գունդի տարածքի զինեալ գրաւման արարքը պատրուակ չի կրնար ծառայել ոստիկանութեան նման վարմունքի համար, որ միայն պիտի նպաստէ՝ արդէն իսկ չափազանց շիկացած մթնոլորտի ա՛լ աւելի սրացման եւ Հայաստանի քաղաքացիներուն կողմէ ոստիկանութեան նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքի խորացման:

«Առ այդ, կոչ կ՚ուղղենք Հայաստանի ոստիկանութեան ըլլալ ողջախոհ եւ շրջահայեաց, յարգել Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացիի մարդկային իրաւունքները եւ քայլեր ձեռնարկել նուազեցնելու լարուածութեան աստիճանը: Փոխադարձաբար, կոչ կ՚ընենք մեր հայրենակիցներուն, որոնք փողոց դուրս եկած են իրենց իրաւունքներուն տէր կանգնելու համար, ցուցաբերել զսպուածութիւն եւ խուսափիլ որեւէ դրդիչ արարքներէ, որոնք կրնան ոստիկանութեան հետ վնասաբեր առճակատման պատճառ հանդիսանալ: Մենք կը հաւատանք, որ ներկայ ճգնաժամային իրավիճակի եւ երկրի առկայ ընկերային եւ տնտեսական խնդիրներու լուծման միակ ճանապարհը գործող իշխանութիւններու ձեւական խոստումներէն դէպի յստակ եւ գործնական լուծումներու քայլերու անցումն է, այլ ոչ թէ ոստիկանութեան բիրտ ուժի միջոցաւ քաղաքացիներուն արդար բողոքի ձայնը լռեցնելը», ըսուած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան յայտարարութեան մէջ:

### Իրաւապահները Անակնկալ Յարձակում Գործեցին «Սասնայ Ծռեր» Խումբի Անդամներուն Վրայ

## Հայաստանի Մէջ Կը Տիրէ Ժողովրդային Ապստամբութեան Մթնոլորտ

*Թերթը մամուլին յանձնելու պահուն խիստ լարուած իրավիճակ կը տիրէր Երեւանի մէջ: Յուլիս 27-ի առաւօտեան կանուխ ժամերուն իրաւապահներու կողմէ կատարուած անակնկալ յարձակումի մը ընթացքին տեղի ունեցած է փոխհրաձգութիւն, որու հետեւանքով վիրաւորուած են «Սասնայ Ծռեր» խումբի անդամներէն Պաւլիկ Մանուկեանը, անոր որդին՝ Արամը, մէկ այլ զինեալ եւ մէկ իրաւապահ ոստիկան: Վիրաւորեալները փոխադրուած են հիւանդանոց: Ոստիկանութեան բանբեր մը յայտնց որ, խումբի երկու անդամներ՝ Արամ Յակոբեան ու Գագիկ Եղիազարեան յանձնուած են իրաւապահ մարմիններուն:*

*Մինչ այդ, «Սասնայ Ծռեր» խումբին կողմէ Երեւանի Էրեբունի շրջանի ոստիկանութեան զօրանոցի գրաւումը կը շարունակուի, թեւակոխելով երկրորդ շաբաթը: Զինեալներուն կողմէ պատանդներու ազատ արձակումով, գործողութիւնը ստացաւ տարբեր բնոյթ, վերածուելով իշխանութիւններուն դէմ ապստամբութեան, որուն մասնակից են նաեւ հազարաւոր ժողովուրդ, որ ամէն օր կը հաւաքուի զօրամասին մօտ, իր զօրակցութիւնը յայտնելու տղաներուն:*



Հազարաւոր ժողովուրդ դուրս եկած է փողոց, իր զօրակցութիւնը յայտնելու «Սասնայ Ծռեր» խումբի տղոց

*Յուլիս 26-ին, «Հիմնադիր Խորհրդարան» կազմակերպութեան բանտարկեալ առաջնորդ Ժիրայր Սեֆիլեան հանդէս եկաւ գործնական առաջարկութեամբ մը՝ իշխանութիւններուն հետ բանակցութիւններ սկսելու ուղղութեամբ: Սեֆիլեան իր փաստաբան Արա Զաքարեանի միջոցով լոյս յայտնեց, որ իշխանութիւնները օր առաջ կը սթափուին եւ կը նստին բանակցութիւններու:*

*«Մենք ունենք յստակ քաղաքական ծրագիր խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Ակնյայտ է, որ բանակցային պրոցեսի ուշացումը տանում է դէպի իրավիճակի լարման, որի պայմաններում կարող են նոր բախումներ, վիրաւորներ եւ մարդկային կորուստներ լինել, ինչը անշուշտ, իշխանութիւնների մեղքն է լինելու», Ժի-*


Շար.ը էջ 5


## Զօրակցական Ցոյցեր Կլէնտէլի Մէջ



Ցուցարարներ հաւաքուած Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանին առջեւ

*Հայաստանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն առթիւ եւ ի զօրակցութիւն «Սասնայ Ծռեր» խումբի մարտիկներուն, ամէնօրեայ ցոյցեր տեղի կ՚ունենան Կլէնտէլի մէջ գտնուող Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի Գլխաւոր Հիւպատոսութեան շէնքին առջեւ:*

*«Հայկական Վերածնունդ» կազմակերպութեան Լոս Անճելըսի մասնաճիւղի կազմակերպութեամբ տեղի ունեցող այս ցոյցերու ընթացքին կը պարզուին քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը պահանջող եւ Հայաստանի իշխանութիւնները դատապարտող պաստառներ:*

*Ցոյցերու ընթացքին ելոյթներով հանդէս կու գան ծանօթ մտաւորականներ:*

## Սկսաւ Գործել «Մասիս Փոսթի» Հայերէն Տարբերակը

*Աւելի քան հինգ տարիներէ ի վեր գործող MassisPost.com անգլերէն լուրերու կայքէջի կողքին, սկսաւ գործել նաեւ հայերէն տարբերակը MassisPost.com/am հասցէով: Կայքէջը կը թարմացուի մնայուն կերպով, Երեւանի մեր լրագրողներուն միջոցաւ ընթերցողներուն փոխանցելով լուրեր՝ հայաստանեան կեանքի վերջին իրադարձութիւններուն շուրջ:*

*Կայքէջին վրայ տեղ կը գտնեն նաեւ սփիւռքեան կեանքին վերաբերող լուրեր եւ ազգային հարցերու շուրջ տեսակէտներ:*

## «ՄԱՍԻՍ»Ի ՅԱՋՈՐԴ ԹԻՒԸ

Տարեկան արձակուրդի բերումով «Մասիս» լոյս չի տեսներ Օգոստոսի յաջորդ երկու շաբաթներուն:
Մեր յառաջիկայ թիւը լոյս կը տեսնէ Շաբաթ, Օգոստոս 20-ին:

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ**

## Բռնութեան Բումերանգը Հասաւ Իշխանութեանը

ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐԵԱՆ

Սասնայ ծռեր Ջոկատի կողմից Էրեբունու ոստիկանական գօրամասը գրաւելուց յետոյ, Հայաստանում ակտիւացել են ամենատարբեր քննարկումները բռնութեան մասին: Այն, որ բռնութեան մշակոյթը Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքի անբաժան տարրերից է, անվիճելի է: Մինչ այժմ, բռնութիւն գործադրելու մենաշնորհը Հայաստանում պատկանում էր հիմնականում իշխանութեանն ու նրա մերձաւոր շրջապատին. բռնութիւնը վերեւից դէպի ներքեւ էր: Նորութիւնն այն է, որ այժմ բռնութիւնը կիրառուել է ներքեւից վերեւ՝ խախտելով համակեցական ստատուս քուոն եւ ուժերի յարաբերութիւնը:

Եթէ առաջնորդուենք դասական վեբերեան տրամաբանութեամբ, ապա պետութիւնն ունի բռնութիւն գործադրելու լեգիտիմ իրաւունք: Բայց երբ պետութեան մէջ խախտուած են արդարութեան հիմնարար գաղափարները, ոտնահարւում են մարդու իրաւունքներն ու ազատութիւնները, բռնութիւնը դառնում է ոչ թէ պետութեան լեգիտիմ, այլ պետութեան ներսում փոքրաթիւ խմբի շահերը մեծամասնութեանը պարտադրելու ոչ լեգիտիմ իրաւունքի: Ի վերջոյ, պետութեան գլխաւոր նպատակը համընդհանուր բարիքի ստեղծումն է, եւ միայն յանուն դրա՝ քաղաքացին կարող է ընդունել այդ բռնութեան իրաւունքը, որով հենց ինքն օժտել է պետութեանը: Բայց երբ իշխանութեան նպատակը դառնում է ոչ թէ համընդհանուր, այլ իր մասնաւոր բարիքի ստեղծումը, ապա նրա կողմից կիրառուող բռնութիւնը դադարում է լինել լեգիտիմ եւ հաւաքական արդարութեան կորուստը քաղաքացուն դրդում է անհատական արդարութեան հաստատմանը:

Տասնամեակներ շարունակ Հայաստանում ոտնահարուել են արդարութեան եւ հաւասարութեան գաղափարները. բազմաթիւ աղմկահարոյց եւ չբացայայտուած սպանութիւններ, պետական միջոցների անխնայ շորթում, անարդար ու կաշառուած դատարաններ, ոստիկանութեան բիրտ եւ ապօրինի գործունէութիւն, սոցիալական խորը բեւեռուածութիւնը փոքրաթիւ հարուստների եւ մեծաթիւ աղքատների միջեւ: Այս ամէնը բերել են մի վիճակի, երբ քաղաքացին չի զգում պետութեան ներկայութիւնը, իսկ աւելի ճիշտ՝ իր մաշկի վրայ զգում է պետութեան բացակայութիւնը:

Սկզբունքօրէն պետութիւնը կայ, կան գործող պետական ինստիտուտներ, բայց խախտուած են դրանց գործունէութեան նպատակները: Օրինակ, արդար պետութեան մէջ դատական իշխանութեան ինստիտուտների նպատակն է՝ լուծել քաղաքացիների միջեւ ծագող կոնֆլիկտները: Անարդար պետութեան մէջ այդ ինստիտուտների նպատակն է՝ լուծել կոնֆլիկտները իշխողների եւ իշխուողների միջեւ, եւ իհարկէ՝ յօգուտ առաջինների: Արդար պետութեան մէջ ստեղծւում են հարկադրանքի ինստիտուտներ՝ ընդունուած կանոնների խախտման դէպքում պատիժ կիրառելու համար: Անարդար պետութեան մէջ հարկադրանքի ինստիտուտները ստեղծւում են՝ բռնաճնշումներ գործադրելու նրանց նկատմամբ, ովքեր հակադրւում են իշխանութեանը:

Ահա այսպէս, երբ խախտւում է պետական ինստիտուտների գործունէութեան տրամաբանութիւնը, խախտւում է պետութեան տրամաբանութիւնն ընդհանրապէս: Եւ բանական անհատները, ովքեր միասին համաձայնութեան են եկել, որ իրենց իրաւունքների մի մասը զիջում են պետութեանը, որ նա կատարի այն, ինչ իրենք չեն կարող անել անհատապէս, մի օր յայտնաբերում են, որ պետութիւնը չի կատարում իր բաժին պարտաւորութիւնը: Օրինակ՝ չի պաշտպանում իրենց կամ պաշտպանում է ընտրողաբար: Այդ պահից սկսած՝ մարդը կամ մարդկային խումբը, վերադառնում է պաշտպանութեան նախկին՝ անհատական մոտելին, որն անխուսափելիօրէն տանելու է կոնֆլիկտի՝ ընդհուպ պետութեան հետ:

Այսօր Հայաստանում առաջացած կոնֆլիկտը կարող է ունենալ ծանր հետեւանքներ մեր պետութեան համար, բայց եւ կարող է բերել մի նոր համաձայնութեան, որը սկիզբ կը դնի համընդհանուր արդարութեան վերականգնման համար: Թէ որ տարբերակը կը լինի, նախ եւ առաջ կախուած է Հայաստանի իշխանութիւնների ողջամտութիւնից եւ իմաստութիւնից, որով նրանք դեռ չեն փայլում: Բայց ինչպէս ասում են՝ ամէն ինչ մի օր լինում է առաջին անգամ: Յուսանք եւ սպասենք:

«ԼՐԱԳԻՐ»

**Մինչ այժմ, բռնութիւն գործադրելու մենաշնորհը Հայաստանում պատկանում էր հիմնականում իշխանութեանն ու նրա մերձաւոր շրջապատին. բռնութիւնը վերեւից դէպի ներքեւ էր: Նորութիւնն այն է, որ այժմ բռնութիւնը կիրառուել է ներքեւից վերեւ՝ խախտելով համակեցական ստատուս քուոն եւ ուժերի յարաբերութիւնը**




## Ինչը Յստակ Չի Ձեւաւորւում 17-ից Սկսած

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Երեւանում արդէն տասներորդ օրուան մօտեցող դրամատիկ զարգացումները այս ամբողջ ընթացքում լեցուն էին ամէն ինչով, բացի երեւի թէ ամենակարեւորից՝ յստակ, որոշակի, տարընթերցումների եւ մեկնաբանութիւնների տեղիք չտուող օրակարգից եւ առաջին հերթին, իհարկէ, ներկայացուող պահանջներից, որոնք ենթադրաբար պէտք է լինեն զինուած ապստամբութեան փորձի դէպքում: Մօտ մէկ տասնօրեակ հանրութեանը այդպէս էլ յստակօրէն պարզ չէ, թէ ինչ պահանջ է ներկայացւում իշխանութիւններին: Արւում են, արուել են ընդհանուր յայտարարութիւններ, այդ թւում՝ իշխանափոխութեան պահանջի եւ Սերժ Սարգսեանի հրաժարականի մասին, սակայն միեւնոյն ժամանակ այդ ամէնի մասին հենց նոյն ապստամբ շրջանակները անում են հակառակ յայտարարութիւններ՝ կապուած, օրինակ, Ժիրայր Սեֆիլեանի մօտեցումների հետ: Միաժամանակ պատասխանատուութիւնը՝ որեւէ բան ասելու, դրւում է հենց Սեֆիլեանի վրայ, որը բանտարկուած է: Թէ ինչ է ասում եւ ինչ է կարծում նա՝ պարզ չէ:

**Հասարակութիւնը անկասկած փորձում է ստանալ տեսանելի հեռանկար՝ մինչ առաջարկին մասնակցութիւն ունենալը կամ մասնակցութեան հարցը որոշելը**

Ստացուել է իսկապէս քաոսիկ մի իրավիճակ, որից տպաւորութիւն է ստեղծւում, որ ՊՊԾ գնդի տարածք մտած «Սասնա ծռեր» խմբի անձնազոհ տղաների նախաձեռնութիւնը ինչ-որ տեղ ձախողուել է՝ իրենցից անկախ պատճառներով: Յամենայն դէպս, յստակ ձեւակերպուած եւ ներկայացուած պահանջների բացակայութիւնը վկայում է, որ այդ խնդիրը պէտք է լուծէին այլք, լուծուեր այլ տեղում եւ այլ տարբերակով, քան ՊՊԾ գնդի գրաւումը, եւ տղաներն արել են, այսպէս ասած, իրենց գործը, իրենցից հասանելիքը: Չի բացառւում, որ քաղաքական պահանջների խնդիր՝ որպէս այդպիսին, ի սկզբանէ չի էլ եղել մշակուած: Վերջին հաշուով, եթէ զինուած ապստամբութիւն է, ապա դա նաեւ ենթադրում է նպատակ վերցնել իշխանութիւնը, ոչ թէ իշխանութեանը ինչ-որ պահանջներ ներկայացնել: Եւ չի բացառւում, որ նաեւ այս առումով է ստեղծուել վակուումը՝ իշխանութիւնը վերցնել, այսինքն՝ ապստամբութիւնը զարգացնել չի յաջողուել (հագիւ թէ զինուած խմբի անդամները պլանաւորել էին հենց մտնել ՊՊԾ տարածք ու պաշարուել այնտեղ), կամ յամենայն դէպս գոնէ առայժմ չի յաջողւում, միաժամանակ չի յաջողւում նաեւ կատարել բովանդակային վերաձեւակերպում եւ ներկայացնել արդէն իրավիճակից բխող յստակ պահանջներ:

Դրա պատճառն այն է, որ այդ իմաստով չկայ որոշումների ձեւաւորման եւ կայացման ամբողջական մեխանիզմ, այդ մեխանիզմի տարբեր բաղադրիչներ տարբեր տեղերում են, եւ առնուազն առկայ է մի եռանկիւնի՝ ՊՊԾ գունդ, Ժիրայր Սեֆիլեան, պայմանականօրէն Խորենացու փողոց, որի միջեւ հաղորդակցութիւնը, սակայն ըստ էութեան կառավարում է իշխանութիւնը: Իսկ դրանց բացակայութիւնն իր ազդեցութիւնն է թողնում նաեւ հասարակական վերաբերմունքի վրայ, քանի որ հանրութիւնը զինուած խմբի տղաների ազատամարտի կենսագրութեան հանդէպ յարգանքով, նաեւ Հայաստանի իշխող համակարգի կամայական եւ, մեղմ ասած, անարդարացի կառավարման հանդէպ հակակրանքից բխող՝ զինուած տղաների հանդէպ որոշակի համակրանքով հանդերձ, այդուամենայնիւ չի կարողանում ամբողջական գնահատել տեղի ունեցածն ու իր մէջ էլ յստակեցնել սեփական վերաբերմունքը եւ դիրքորոշումը կատարուածի հանդէպ:

Ի վերջոյ, հասարակութիւնը անկասկած փորձում է ստանալ տեսանելի հեռանկար՝ մինչ առաջարկին մասնակցութիւն ունենալը կամ մասնակցութեան հարցը որոշելը:

Այդ խնդիրների հանրագումարում ձեւաւորւում է որոշակիօրէն օդից կախուած մի վիճակ, որը հաստատ չի բխում թէ՛ զինուած խմբի, թէ՛ հասարակութեան շահերից, ընդ որում՝ որեւէ հանգուցալուծման դէպքում:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

www.massispost.com


Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Ըստ Մասնագէտի «Սասնայ Ծռերի» Գործողութիւնը Ահաբեկչութիւն Չէ

«Սասնայ Ծռերի» գործողութիւնն ահաբեկչութիւն չէ, քանի որ այն ուղղուած է եղել պաշտօնատար անձանց դէմ, ոչ թէ՝ քաղաքացիական, Միջազգային իրաւունքի մասնագէտ Արա Ղազարեանն Aravot.am-ի հետ զրոյցում նկատեց, որ այս պահի դրութեամբ «Սասնայ Ծռեր» խմբի նկատմամբ Քրէական օրէնսգրքի 217 յօդուածը՝ Ահաբեկչութիւնը, կիրառելի չէ, քանի որ երկու տարի առաջ այս յօդուածում փոփոխութիւններ են կատարել եւ նեղացրել են դիսպոզիցիան:

Պարոն Ղազարեանի դիտարկմամբ՝ մեր օրէնսդրութեամբ, «Սասնայ Ծռերի» գործողութիւններն այսօրուայ փաստերի առկայութեան դէպքում ահաբեկչութիւն չէ: Սակայն, ըստ մասնագէտի, միջազգային իրաւունքը գարգանում է այն ուղղութեամբ, որ անկախ նրանից՝ քաղաքական անձի, թէ պաշտօնատար անձի դէմ է գործողութիւնը, գլխաւորն այն է, թէ որն է նրա նպատակը, մտադրութիւնը .«Ինչ մտադրութիւնով է արուել: Այսինքն, դու կարող ես յարձակուել ոստիկանական գնդի վրայ, զէնք գողանալու նպատակով: Բայց կարող ես յարձակուել գնդի վրայ, ահաբեկել պետական մարմիններին եւ ստիպել նրանց կատարել որոշակի գործողութիւն: Միջազգային իրաւունքում դեռ չի ձեւաւորուել, բայց այդ ուղղութեամբ են գնում քննարկումները, որ դէպքում ահաբեկչութիւն անուանուի: Շատ պետութիւնների կողմից չի ընդունւում, որովհետեւ մէկի համար ահաբեկիչ է, միւսի համար ազատութեան մարտիկ»:

Մեր այն հարցին՝ 217 յօդուածում այդ փոփոխութիւններն ինչպէ՞ս կը գնահատէք, լա՞ւ է, թէ՝ ոչ, Արա Ղազարեանն ասաց, որ յօդուածի նախկին տարբերակն իր որոշ տարրերով, այնքան էլ յաջող չէր, բայց հիմա այն մասով, որ ահաբեկչութիւն դիտարկւում է այն դէպքում, երբ միայն քաղաքացիական անձանց նկատմամբ է գործողութիւնը, վատ է.«Օրինակ, Հոկտեմբերի 27-ը, այդ գործողութիւններն ուղղուած էին Ազգային ժողովի պատգամաւորների դէմ, բայց քանի զոհ ունեցանք, հիմա սա ահաբեկչութիւն չկոչենք, ի՞նչ կոչենք: Կարեւորը նպատակն էր՝ ստիպել էր պետական մարմիններին ինչ որ գործողութիւն կատարել: 21-րդ դարում ենք, ամէն շաբաթ ամբողջ աշխարհում ահաբեկչութիւններ են լինում ու գնալով դրանց մեթոդներն ու եղանակները գարգանում են, եւ եթէ նեղ պահենք ահաբեկչութեան դիսպոզիցիան, դրանով աւելի ու աւելի է վտանգւում ազգաբնակչութեան անվտանգութիւնը: Այստեղ մի հարց էլ կայ. Նոր Սահմանադրութեան մէջ նշւում է՝ հանրային իշխանութիւն, այսինքն՝ պետական բառը փոխել են հանրայինով՝ հանրային իշխանութիւն: Հիմա, եթէ ոտնձգութիւն է կատարւում հանրային ծառայութիւն իրականացնող պետական մարմնի վրայ, իսկ այդ պետական մարմինը հանրային անվտանգութիւնը պէտք է ապահովի, ապա սա ոտնձգութիւն է հանրային անվտանգութեան վրայ»:

# Ուժայինների Մէջ Կռիւ Է Ընկել, Թէ Ով Է Մեղաւոր Այս Իրավիճակի Համար

«Հայկական ժամանակ» թերթի տեղեկութիւններով, «Սասնայ ծռեր» խմբի կողմից ոստիկանութեան Էրեբունու ՊՊԾ գնդի գրաւման պատճառով ուժային կառոյցների՝ յատկապէս ոստիկանութեան եւ ազգային անվտանգգութեան ծառայութեան ղեկավարութեան միջեւ կռիւ է ընկել:

Երկուստեք իրար են մեղադրում այդ իրավիճակի ստեղծման պատասխանատուն լինելու մէջ: ԱԱԾ ղեկավարութիւնը մեղադրում է ոստիկանութեանը, թէ դու քո կառոյցը լաւ չես հսկել, որ դրսից մի խումբ մարդիկ են եկել ու գրաւել:

Ոստիկանութիւնն էլ արդարանում է, թէ գնդում ընդամէնը 8 ծառայող է եղել՝ խմբի մօտ երեք տասնեակի դիմաց:

Ոստիկանութիւնը միաժամանակ ԱԱԾ-ին մեղադրում է, քանի որ օպերատիւ հետախուզութիւնն այս կառոյցն է իրականացնում, ինչու է թերացել այդ մասին ժամանակին տեղեկանալու ու իրենց տեղեկացնելու վերահաս վտանգի մասին, յատկապէս, որ Ժիրայր Սեֆիլեանին ձերբակալելուց յետոյ յայտարարուել էր, թէ նա ու իր համակիրները պլանաւորել են գրաւել պետական նշանակութեան կարեւոր օբիեկտներ»:

# Ոստիկանները Թոյլ Չեն Տալիս Փաստաբաններին Ու Հարազատներին Տեսակցել Վիրաւորներին

Երկու փաստաբան արձագանքել են «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխուած՝ զինուած խմբի վիրաւոր անդամ Աշոտ Պետրոսեանի դստեր խնդրանքին:

Տաթեւ Պետրոսեանը, յիշեցնենք, խնդրել էր օգնել իրեն փաստաբան գտնել:

Այս պահին փաստաբաններ Արայիկ Պապիկեանն ու Հայարփի Սարգսեանն արդէն հիւանդանոցում են, նրանք փորձում են տեսակցել վիրաւորներին, սակայն ոստիկանները թոյլ չեն տալիս:

Փաստաբանները զանգահարեցին Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խումբ եւ տեղեկացրին, որ ոստիկանները խախտում են վիրաւորների իրաւունքները՝ թոյլ չտալով փաստաբաններին ու հարազատներին տեսակցել նրանց:

Աշոտ Պետրոսեանի դուստրը, վկայակոչելով բժիշկներին, փոխանցեց, որ ապահովութեան համար վիրաւորներն այսօր կը մնան հիւանդանոցում, իսկ վաղը կը տեղափոխուեն: Թէ ու՞ր բժիշկները, ըստ Պետրոսեանի դստեր, չեն յստակեցրել:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Իրաւապաշտպան Կազմակերպութիւններու Համաձայն, «Գործի Են Դրուել Աւանդական Վայրագ Գործողութիւնները»

Իրաւապաշտպան մի խումբ կազմակերպութիւններ հանդէս են եկել յայտարարութեամբ, կապուած վերջին օրերին իրաւապահ մարմինների գործողութիւնների հետ:

Յայտարարութիւնում, մասնաւորապէս, նշւում է, որ Յուլիսի 17-ի վաղ առաւօտեան «Սասնայ ծռեր» խմբի կողմից ՊՊԾ գնդի շէնքը գրաւելու գործողութեանը հետեւեցին բողոքի ակցիաներ Երեւանի Ազատութեան հրապարակում, այնուհետեւ Խորենացու փողոցում, որոնց ժամանակ ՀՀ ոստիկանութիւնը՝ դուրս գալով իր լիազօրութիւնների շրջանակից, գործի է դրել իր աւանդական վայրագ, բռնի եւ սադրիչ գործողութիւնները՝ խաղաղ հաւաքի մասնակիցների նկատմամբ, բնակչութեան հանդէպ:

Առաջին իսկ օրը Երեւանի «Ազատութեան» հրապարակում՝ առանց իրաւական հիմնաւորումների, զանգուածաբար բերման են ենթարկել խաղաղ հաւաքի մասնակիցներին, ընդ որում, գործողութիւնները զուգորդուած են եղել բռնութեամբ, քաշքշուկներով, հայհոյեանքներով, անմարդկային վերաբերմունքով՝ այդ թւում նաեւ կանանց նկատմամբ: ՀՀ ոստիկանութիւնը, իր գործելակերպի համաձայն, այդ վայրագութիւններին մասնակից է դարձնում նաեւ քաղաքացիական համազգեստով ոստիկանների, որոնք որեւէ տարբերանշան չեն կրում իրենց հագուստին:

ՀՀ ոստիկանութեան եւ ՀՀ ազգային անվտանգութեան ծառայողները այցելում են նաեւ «Սասնայ ծռեր» խմբի անդամների ընտանիքների բնակարաններ, խուզարկում, ահաբեկում կանանց եւ երեխաներին, ընտանիքի այլ անդամների, սպառնում ձերբակալութեամբ եւ այլ գործողութիւններով: Նրանցից ոմանք ոստիկանների կողմից բռնի ուժով բերման են ենթարկուել ոստիկանութեան տարբեր բաժիններ, առանց համապատասխան փաստաթղթի եւ պահուել երեքից աւելի ժամ, որտեղ ենթարկուել են անմարդկային վերաբերմունքի ու ծաղրանքի:

Ամենազաւեշտալին այն է, որ Յուլիսի 22-ին ՀՔԾ որոշմամբ բերման է ենթարկուել նաեւ քաղաքացիական ակտիվիստ, մշակոյթի գործիչ Անի Նաւասարդեանը, ով եղել է խաղաղ հաւաքի ակտիւ մասնակիցներից մէկը: Աւելի ուշ նա կրկին բերման է ենթարկուել իր բնակութեան վայրի բակային տարածքից եւ ձերբակալուել է՝ զանգուածային անկարգութիւններ հրահրելու կասկածանքով: Բազմաթիւ առցանց եւ այլ տեսանիւթերից երեւում է, որ Անի Նաւասարդեանը պատմում է իր հետ կատարուածը, որ իր մարմնի վրայ ունի նաեւ կապտուկներ եւ վնասուածքներ:

«Ընդդէմ կանանց նկատմամբ բռնութեան» կոալիցիան խիստ մտահոգուած է եւ դատապարտում է ՀՀ ոստիկանութեան եւ ՀՀ ազգային անվտանգութեան ծառայողների այս ապօրինի գործելաոճը, որն ունի նաեւ քաղաքական ենթատեքստ: Այդ գործողութիւնները միտուած են հանրութեան, մասնաւորապէս կանանց եւ աղջիկների շրջանում վախի եւ սարսափի մթնոլորտ ստեղծելով սահմանափակել նրանց խաղաղ հաւաքներին ու ակցիաներին մասնակցելու, հրապարակային ելոյթներ ունենալու եւ կարծիքներ յայտնելու իրաւունքը:

Մենք պահանջում ենք, որպէսզի քաղաքացիական ակտիվիստ Անի Նաւասարդեանը եւ այս մի քանի օրերի ընթացքում ձերբակալուած քաղաքացիներն անյապաղ ազատ արձակուեն եւ նրա, ինչպէս նաեւ այլ քաղաքացիների նկատմամբ բռնութիւններ ու անմարդկային վերաբերմունք ցուցաբերած ոստիկանները ենթարկուեն պատասխանատուութեան եւ հեռացուեն համակարգից»:

# «Օսկանեանն Ու Փաշինեանը Փորձեցին Օգտուել Երեւանում Ստեղծուած Իրավիճակից». Վիգէն Յակոբեան

Ոստիկանութեան ՊՊԾ գնդի գրաւումից յետոյ Հայաստանի որոշ ուժային կառոյցներում, օրինակ, այդ նոյն Ոստիկանութիւնում, փոփոխութիւններ տեղի կ'ունենան: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ, ասել է քաղտեխնոլոգ Վիգէն Յակոբեանը:


Քաղաքական մեկնաբան Վիգէն Յակոբեան

Նրա խօսքով՝ Յուլիսի 17-ին ՊՊԾ գնդի գրաւմանը յաջորդած իրադարձութիւնները շատ բազմաշերտ են: «Եւ շատերը, այդ թւում՝ երկրի ներսում, փորձում են օգտուել այդ գործընթացներից»,- ասել է Յակոբեանը եւ յաւելել, որ ընդհանրապէս զարմանալի չէ, որ նման իրադարձութիւններին փորձում են մասնակցել նորաթուխ քաղաքական ուժերը, քանի որ նման գործընթացների ժամանակ կարող են յեղափոխական, ընտրական կամ այլ սցենարներ լինել, իսկ քաղաքական ուժերը պէտք է փորձեն ինքնադրսեւորուել:

«ՀՀ նախկին արտգործնախարար, «Համախմբում» կուսակցութեան նախագահ Վարդան Օսկանեանը փորձեց արձանագրել իր ներկայութիւնը քաղաքական դաշտում: Մենք բոլորս, բնականաբար, հասկանում ենք, որ դա քաղաքական PR էր: Ինչ վերաբերում է ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեանին, ապա հասարակութեան վստահութիւնը նրա նկատմամբ աւելի մեծ է, քան Օսկանեանի: Փաշինեանը փորձեց իրականացնել իր թէզիսը, որ Հայաստանում կայ ընդդիմութիւն, եւ այդ ընդդիմութիւնն ինքն է եւ իր համախոհները»,- ասաց Վիգէն Յակոբեանը:»

## ԼՈՒՐԵՐ

### Խոմեակով. «Մոսկուան Կրնայ Միջամտել Երեւանի Իրադարձութիւններուն»


Ռուսաստանցի փորձագէտ Վալերի Խոմեակով

Ռուսաստանցի փորձագէտ Վալերի Խոմեակովը չի բացառում, որ Մոսկուան միջամտի երեւանեան իրադարձութիւններին:

Յուլիսի 22-ին Ռուսաստանի արտգործնախարարութիւնը մի յայտարարութիւն էր տարածել, որում մեղադրել էր Եւրամիութեանը՝ Հայաստանում իրադրութիւնը սրող ուժերին սիրաշահելու մէջ:

Մի քանի օր առաջ ԵՄ պատուիրակութիւնը յայտարարութիւն էր տարածել Երեւանում տեղի ունեցող վերջին իրադարձութիւնների առնչութեամբ, որում իշխանութիւններին կոչ էր արել յարգել «համաչափութեան սկզբունքը խաղաղ բնոյթի, ինչպէս նաեւ բռնութեամբ ուղեկցուող հանրային բողոքի ակցիաների ժամանակ»: Եւրամիութեան այս յայտարարութիւնը աւելի վաղ քննադատել էր նաեւ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Հայաստանեան իրադարձութիւնները հերթական առիթն են պաշտօնական Մոսկուայի համար յայտարարելու՝ տեսէ՛ք ինչ վատն է Արեւմուտքը, ինչ են կազմակերպել Հայաստանում: Սա է տրամաբանութիւնը», - «Ազատութեան» հետ հեռախօսազրոյցում ասաց Ազգային ռազմավարութեան խորհրդի գլխաւոր տնօրէն, քաղաքագէտ Խոմեակովը: - «Ինձ մօտ այնպիսի տպաւորութիւն է, որ մեր արտգործնախարարութիւնը նոյնիսկ չի փորձում հասկանալ, թէ ինչ է իրականում կատարւում Հայաստանում: Չէ՞ որ ողբերգութիւն է տեղի ունեցել, մարդ է մահացել: Բայց արտգործնախարարութեան համար սա ընդամէնը առիթ է՝ հերթական անգամ Եւրամիութեանը ինչ-որ բաներում մեղադրելու համար: Նման յայտարարութիւնները պարզապէս վիրաւորական են հայաստանցիների համար: Եկէք չմոռանանք, որ Հայաստանը կիեւեան Ռուսիայից 700 տարի առաջ է քրիստոնէութիւն ընդունել», - ասում է փորձագէտը:

Ըստ Խոմեակովի, Մոսկուան նոյն սխալներն է թոյլ տալիս, ինչ ուկրաինական Մայդանի ժամանակ: - «Չի կարելի նման դէպքերում միայն իշխանութեան կողմը կանգնել, գոնէ այն պատճառով, որ իշխանութիւնը կարող է փոխուել», - ասում է նա՝ յաւելելով. - «Սա շատ մակերեսային, անհեռանկարային արձագանք է: Իրավիճակը կարող է փոխուել եւ ռուսական դիւանագիտութիւնը շատ բարդ իրավիճակում կը յայտնուի»:

Սրա հետ մեկտեղ, փորձագէտը երեւանեան իրադարձութիւնների եւ Մայդանի միջեւ նմանութիւն չի տեսնում երկու հիմնական պատճառով: Առաջինը՝ այսօրուայ զարգացումների հիմքում, ըստ Խոմյակովի, ղարաբաղեան գործօնն է: Բացի այդ, գրեթէ բոլոր զինեալները ղարաբաղեան պատերազմի մասնակիցներ են: Եւ երկրորդը՝ հայաստանցիները չեն համախմբուել, ինչպէս ուկրաինացիները 2014-ին, ասում է փորձագէտը եւ յաւելում՝ իրադարձութիւնները շարունակւում են:

### Մինչ Յեղաշրջման Փորձը Թուրքիան Ցանկանում Էր Հայաստանի Հետ Յարաբերութիւնները Կարգաւորել


Թուրքիայի ԱԳ նախարար Մեւլութ Չավուշօղլու

Բաքու իրականացրած այցի ընթացքում Թուրքիայի ԱԳ նախարար Մեւլութ Ջավուշօղլուն քննարկումներ է իրականացրել Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման նախաձեռնութիւն սկսելու համար եւ դրական միտումներ են եղել: Նման տեղեկութիւն է յայտնել Թուրքական «Հիւրրիյթ» թերթի թղթակից Ֆաթիհ Ջեքիրգէն:

Թուրք լրագրողն իր հրապարակման մէջ նշել է, թէ մինչ յեղաշրջման փորձը Անկարան ՌԴ-ի հետ յարաբերութիւնները կարգաւորելուց յետոյ ցանկացել է նախաձեռնել Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորում, ընդհուպ մինչեւ սահմանների բացում:

«Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման համար առաջին նախաձեռնութիւնը ԱԳ նախարար Ջավուշօղլուն արել է Յուլիսի 14-15-ին Բաքու կատարած այցի ժամանակ: Նա փորձել է Բաքւում ստուգել Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու նախաձեռնութեան արձագանքը: Դրական միտում է եղել: Ռուսաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորումից յետոյ Թուրքիան խօսում էր Ատրպէյճանի հետ՝ Հայաստանի հետ խաղաղութեան ժամանակացոյց կազմելու ուղղութեամբ, երբ սկսուեց ռազմական յեղաշրջման փորձը»,-գրել է

### Հայաստան-ԵՄ Բանակցութիւններում Արդէն Իսկ Համաձայնութիւններ Կան


Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնեան

Նոր շրջանակային փաստաթղթի շուրջ Հայաստանի ու Եւրամիութեան միջեւ շուրջ ութ ամիս շարունակուող բանակցութիւններում արդէն իսկ համաձայնութիւններ կան? այսօր լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնեանը, ով հայկական կողմի գլխաւոր բանակցողներից մէկն է:

«Որոշակի հատուածում արդէն համաձայնութիւնները ունենք, շատ հատուածներ կան, որոնք աշխատանքային կարգով քննարկումները շարունակւում են», - նշեց Մելքոնեանը:

Եւրամիութեան հետ Հայաստանը երկրորդ անգամ է բանակցում առեւտրին, ներդրումներին, քաղաքական փոխգործակցութեանը վերաբերող համապարփակ փաստաթուղթ ստորագրելու նպատակով: Նախորդ բանակցութիւնները տեւեցին մօտ 3.5 տարի, աւարտուեցին յաջողութեամբ, փաստաթուղթը պատրաստ էր ստորագրման, սակայն 2013թգ սեպտեմբերի 3-ին Մոսկուայում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպելուց յետոյ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը շատերի համար անակնկալ կերպով յայտարարեց Կրեմլի նախաձեռնած Եւրասիական միութեանը անդամակցելու մասին, ինչը, փաստօրէն, նշանակում էր Եւրամիութեան հետ տարիներով բանակցուած փաստաթղթից հրաժարում:

Այնուհետեւ, պահանջուեց աւելի քան երկու տարի, մինչեւ Հայաստանն ու Եւրամիութիւնը բանակցութիւններ սկսեցին?Նոր շրջանակային համաձայնագրի շուրջ: Բանակցութիւնները պաշտօնապէս մեկնարկեցին անցած տարուայ դեկտեմբերի 7-ին Բրիւսելում:

Գարեգին Մելքոնեանի փոխանցմամբ? բանակցութիւնները բնականոն տեմպով առաջ են ընթանում - ,Մինչեւ տարեվերջ դեռեւս երկու բանակցային ռաունդ նախատեսւում է մեր մասով իրականացնել, որեւէ յատուկ սուր, պրոբլեմատիկ հարց այս պահի դրութեամբ չունեմ, որը հնարաւոր է նշել որպէս խնդրայարոյց խնդիր բանակցային գործընթացի տեսանկիւնից»:

Մելքոնեանը ժամկէտ չնշեց, թէ երբ կ'աւարտուեն բանակցութիւնները, նաեւ չյստակեցրեց? արդեօք պաշտօնական Երեւանը ԵՏՄ այլ անդամների, այդ թւում Ռուսաստանի հետ քննարկո?ւմ է Եւրամիութեան հետ ընթացող բանակցութիւնները:

### Ընդվզելու Փոխարէն, Մարդիկ Այս Ծայրայեղ Քայլին Են Գնում

«Ունենք բզկտուած, ֆունկցիոնալ ցած իջած ընդդիմութիւն, որը չի ուզում դեր ստանձնել, երբ կայ դրա անհրաժեշտութիւնը, որովհետեւ դա միայն կարող է մարդկանց դուրս բերել ճգնաժամից»,- ասում Վարդան Խաչատրեանը:

Հենց սա է, ըստ բանախօսների, պատճառը, որ ազատամարտիկներն են յայտնուել իշխանափոխութիւն պայանջող առաջնորդի կարգավիճակում:

«Պէտք է ծաւալուեն կոնկրետ բանակցութիւններ, եւ ոչ թէ՝ միջնորդների մասնակցութեամբ պայմանների շուրջ զրոյցներ».

«Պէտք է ծաւալուեն կոնկրետ բանակցութիւններ, եւ ոչ թէ՝ միջնորդների մասնակցութեամբ պայմանների շուրջ զրոյցներ» ասաց Բորիս Նաւասարդեանը:

«ՊՊԾ գնդի գրաւումից յետոյ ստեղծուած փակուղին այս օրերի ընթացքում չի մեղմուել»,- 168.am-ի հետ զրոյցում նման կարծիք յայտնեց Երեւանի մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նաւասարդեանը՝ անդրադառնալով «Սասնայ ծռեր» խմբաւորման գործողութիւնների հետեւանքով Երեւանում ստեղծուած ճգնաժամային իրավիճակի լուծման ելքերին:

Նա նշեց, որ այն փակուղային իրավիճակը, որը Երեւանում ստեղծուել է Ոստիկանութեան ՊՊԾ գնդի գրաւմամբ, անփոփոխ է մնացել:

«Ամէն դէպքում ես համարում եմ, որ բանակցութիւնները, ընդ որում, քաղաքական օրակարգի շուրջ, ապստամբների հետ պէտք է շարունակուեն: Եթէ բանակցութիւնները կառուցողական լինեն եւ տանեն դէպի այնպիսի յանգուցալուծում, որը հասարակութեան շահերից է բխում, չեմ բացառում, որ կողմերի աւելի փոխզիջումային մօտեցումներ դրսեւորուեն»,- ասաց Նաւասարդեանը:

### Իրաւապահները Անակնկալ Յարձակում Գործեցին

Շարունակուած էջ 1-էն

րայր Սեֆիլեանի այս խօսքերը «Ազատութիւն» ռատիոկայան փոխանցեց փաստաբան Արա Զագարեանը:

Նոյն օրը երեկոյեան, Խորենացի փողոցին վրայ տեղի ունեցող հերթական բողոքի հաւաքի ընթացքին ելոյթներով հանդէս եկան օր մը առաջ կազմուած «Հակաճգնաժամային Նախաձեռնող Խորհուրդի» անդամներ եւ այլ գործիչներ: Բոլոր խօսք առնողները պահանջեցին արագօրէն լուծել «Սասնայ Ծռեր» խումբի տղոց սնունդի, ջուրի եւ այլ առաջին անհրաժեշտութիւն հանդիսացող խնդիրներու լուծումը: Հանրահաւաքին յաջորդեց երթ՝ Երեւանի կեդրոնական փողոցներով:

Այս իրադարձութիւններու կողքին տեղի ունեցան նաեւ զինեալ բախումներ, որոնց ընթացքին վիրաւորուեցան զինեալ խումբի բազմաթիւ անդամներ:

## Հոռոմում Դիմաւորեցին Հերոս Զինուորին



Պարտադիր զինուորական ծառայութիւնն աւարտելուց յետոյ, Յուլիսի 23-ին, հայրենի Հոռոմ գիւղ վերադարձաւ ՊԲ շարքային Գէորգ Մանուկեանը: Գէորգին դիմաւորելու էր եկել ողջ գիւղը: Հերոս Գէորգին՝ հոռոմցիները հերոսին վայել ընդունելութիւն էին կազմակերպել:

Ապրիլի 2-ին լուսադէմին 6:45-ի սահմանում հակառակորդի ակտիւութիւն էր նկատուել, որի ժամանակ նրանց ուղղաթիռը՝ մօտենալով սահմանին, սկսել էր հրթիռներ արձակել մեր դիրքերի ուղղութեամբ: Նկատելով ուղղաթիռը՝ Գէորգը զէնքն անմիջապէս բերել է մարտական դիրքի եւ բարձրանալով դիրքերը, ընդունել է նպաստաւոր մեկնարակային դիրք եւ «Իգլայով» խոցել է հակառակորդի ռազմական ուղղաթիռը:

Կատարուածի համար Գէորգը ՀՀ ՊՆ կողմից արժանացել է «Արիութեան», իսկ ԼՂՀ ՊԲ-ի կողմից «Մարտական Խաչ Երկրորդ աստիճանի» շքանշանների: Սակայն այսքանից յետոյ էլ հերոս տղան իրեն հերոս չի համարում, անկեղծանում է.

«Ես իմ կատարածը հերոսութիւն չեմ համարում, այլ զուտ պարտք, պատք՝ իմ հայրենիքի, իմ ընտանիքի, իմ ազգի հանդէպ: Շքանշաններն էլ՝ իմ համար պարտաւորեցնող են»,-«Արմենպրես»-ի հետ զրոյցում նշեց Գէորգ Մանուկեանը:

Որդու արիութեան մասին համեստաբար էին խօսում նաեւ ծնողները. հայրը՝ Յովհաննէս Մանուկեանը, փաստեց. «Ես այսօր հերոսի չէ, որ դիմաւորում եմ, այլ իմ զինուոր տղային: Թող իր հերոսական քայլը ժողովուրդը գնահատի: Իմ որդին մենակ չէր, իր ընկերների հետ էր՝ 18-20 տարեկան տղաների, ովքեր շատ բան ապացուցեցին»,-նշեց Յովհաննէս Մանուկեանը: Գէորգի մայրն անկեղծանում է ՝ որդին քիչ է խօսում այդ օրերի մասին: «Դժուար է հիմա զգացմունքերս զսպել: Սա մի ուրիշ ուրախութիւն է, թող այս ուրախութիւնը բոլոր մայրերը զգան»,-յաւելեց Ռիմա Մանուկեանը:Գէորգին առաջարկութիւն է եղել շարունակել զինուորական գործը, սակայն այս առաջարկի մասին Գէորգը մտածում է՝ դեռ նպատակ ունի շարունակելու ուսումը՝ ԵՊՀ-ի ուսանողը՝ նախ ցանկանում է լաւ պատմաբան դառնալ:

Գէորգին Հոռոմում ամենաշատը սպասում էին տանեցիները՝ հայրը, մայրն ու քոյրերը: Հայրական տուն մտնելուց անմիջապէս յետոյ տղան գնում է գիւղի գերեզմաններ, որտեղ յուղարկաւորուած է ապրիլեան քառօրեայ պատերազմի զոհ դարձած իր համագիւղացին՝ ՊԲ պայմանագրային զինծառայողներ Տիգրան Մխիթարի Պողոսեանը (ծնւ. 1992թ.):

## Պարգեւատրուել են Saber Janction-ին Մասնակցած Բուժծառայողները



Պարգեւատրուել են Մարտի 29-ից Ապրիլի 22-ը Գերմանիայում անցկացուած «Միաձուլուած սուր-2016» (Saber Junction 2016) բազմազգ զօրավարժութեանը մասնակցած եւ աչքի ընկած Հայաստանի բանակի բժիշկները, բուժքոյրերը եւ բուժակները:

ՀՀ պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ Դաւիթ Տօնոյեանը եւ ՀՀ ԶՈւ գլխաւոր շտաբի պետի առաջին տեղակալ Էնրիկօ Ապրիամովը շնորհակալութիւն են յայտնել բուժծառայողներին մասնագիտական բարձր պատրաստուածութեան եւ ակտիւութեան, ինչպէս նաեւ առաջադրուած խնդիրները ժամանակին եւ օպերատիւօրէն իրականացնելու համար:

«Միաձուլուած սուր 2016» միջազգային զօրավարժութեանը մասնակցել է մօտ 5000 զինծառայող 15 պետութիւնից:

ՀՀ ԶՈւ դաշտային շարժական հոսպիտալի մասնակցութեան հիմնական նպատակն էր դաշտային հոսպիտալի տեղափոխման աշխատանքների կազմակերպումը եւ փորձի փոխանակումը, ինչպէս նաեւ պատերազմական պայմաններին առաւելագոյն մօտեցուած իրավիճակներում բուժօգնութեան ցուցաբերման եւ տարհանման աշխատանքների կազմակերպումը, ՀՀ ԶՈւ դաշտային հոսպիտալի փաստաթղթաշրջանառութեան համապատասխանեցումը ՆԱՏՕ-ի չափորոշիչներին եւ այլն:

## Բացումը Պիտի Կատարուի Քէրքուքի Հայկական Եղեղեցիին





Իրաքահայոց թեմի առաջնորդ Տ. Աւագ Արք. Ասատուրեան օրերս Իրաքի Քէրքուք քաղաք այցելած է մօտէն ծանօթանալու տեղւոյն հայ համայնքի ընդհանուր իրավիճակին: Այս մասին տեղեկութիւնը կը փոխանցէ «Արեւելք» կայքը: Աղբիւրը նաեւ կը նշէ, թէ առաջնորդ Սրբազանը օգտուելով իր Քէրքուք գտնուելու առիթէն պատեհ համարած է մօտէն հետեւիլ շրջանին մէջ եղող միակ եկեղցւոյ կառուցման աշխատանքներուն:

«Արեւելք»ի աղբիւրը նաեւ յայտնեց, որ եկեղեցւոյ անուանակոչութեան եւ օծման արարողութ-իւնը պիտի կատարուին յառաջիկայ ամիսներուն: Նշենք, որ Սրբազան հօր այս այցին ընկերակցած են Քէրքուքի հայ ազգային խոր-հուրդի յանձնախումբի անդամներ:

## Տ. Արմաշ Սրբազան- Ծանր Գիշեր Մը Անցուցինք Դամասկոսի Մէջ



«Դամասկոսի մէջ այսօր իրավիճակը խաղաղ եւ կայուն է, բայց երէկ բաւական ծանր գիշեր մը անցուցինք» «Արեւելք» կայքին ըսած է Դամասկոսի թեմի առաջնորդ Տ. Արմաշ Եպս. Նալպանտեան: Սրբազանը նաեւ նշած է, որ Կիրակի գիշեր հրթիռարձկումներու ենթարկուած է յատկապէս Դամասկոսի Պապ Թումա քրիստոնէաշատ շրջանը, ուր հրթիռ մը ինկած է շրջանին մէջ եղող ճաշարանի մը վրայ պատճառ դառնալով մեծ թիւով մարդկային կորուստներու: Սրբազանին խօսքով զոհերուն թիւը հասած է 8-ի եւ գրանցուած են տասնեակ վիրաւորներ: Հրթիռներ ինկած են նաեւ եւ հայ Կաթողիկէ եւ Լատինաց եկեղեցիներու մօտակայքը:

Ըստ Սրբազանին եկեղեցիները չեն վնասուած, բայց հրթիռի պայթումին հետեւանքով փշրուած են հայ Կաթողիկէ առաջնորդարանի շէնքի կարգ մը ապակիները:

Նշենք, որ երէկ եղած ծանր հրթիռարձկումներուն հետեւանքով զոհուածներուն մէջ հայեր չկան: Իրավիճակը այսօր խաղաղ է Դամասկոսի մէջ:

# ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻԷՆ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ

ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Այս օրերուն ամենաշատ հոլովուող անունը Խորենացի է. անշուշտ՝ Երեւանի փողոցներէն մին եւ ոչ թէ պատմահայր ու քերթողահայր Մովսէս Խորենացին:

Ապրիլեան պատերազմին վէրքերը չամոքած, որբեւայրիներու թաց աչքերը տակաւին չչորցած, մի քանիտասնեակ հաշմանդամ զինուորներու տարրական կարիքներն ու արհեստական ոտքերը չապահոված, խրայէլեան անօդաչու սարքերուն ծանր ցնցումէն դեռեւս ուշքի չեկած, աւելին՝ քաղաքական ու ռազմական սեղմուող օղակներէն չսթափած, Պաքուի սպառնալիքներուն եւ Մոսկուայի լպրծուն քաղաքականութեան դիմաց ազգովին դիմակալելու պատրաստակամութեամբ պէտք եղածկերպով չզրահուած, ահա աւելի աhեղ պալար մը կը պայթի Երեւանի մէջ: Եւ ինչ հեգնանք՝ Խորենացի փողոցին վրայ:

Ինչո՞ւ հեգնանք:

5-րդ դարուն, Հայոց Պատմահայրը իր արժէքաւոր մատեանին վերջին գլուխը՝ «Ողբ»ը կարծէք գրած ըլլար այս օրերուն: Ան Արշակունեաց թագաւորութեան անկումին եւ Սբ. Գրիգոր Լուսաւորիչի տոհմին եպիսկոպոսապետութեան դադրելուն պատճառները ներկայացնելով կ՛ունենայ ցաւակսկիծ մտորումներ. կը պատկերէ երկիրին վիճակը այնպէս՝ ինչպէս որ է. «Ողբում եմ քեզ, հայոց աշխարհ, որովհետեւ վերացան թագաւորդ ու քահանադ, արմատացաւ անկարգութիւնը, խախտուեց ուղղափառութիւնը, հիմնաւորուեց տգիտութեամբ չարափառութիւնը»:

Տարբեր հանգրուաններու հայոց անկումներուն դրդապատճառները հեռուները չփնտռէք. աջէն ու ձախէն մեղաւորներ չորոնէք. արտաքին ուժերու վրայ անէծք ու լուտանք չթափէք. ի զուր յանցաւորներ չերեւակայէք:

Հերիք է Խորենացիին «ողբ»ը՝ տեսնելու համար մեր մէջ բոյն դրած տարաբնոյթ ախտերը: Ինքնաճանաչման ուղղորդիչ աւետարանն է այս՝ բոլորիս ուսանելի:

Այսօր, հայկական կեանքին ուշադրութեան կեդրոնը Երեւանի Խորենացի փողոցն է, ուր կ՛արձանագրուին խիստ մտահոգիչ զարգացումներ, անկանխատեսելի դէպքեր: Արիւնլուիկ ինկաւ եղբայրասպանութեան վերջին զոհը՝ գնդապետ Արթուր Վանոյեան: Ազգը երկփեղկուած է. բեւեռացած է հայ հասարակութիւնը եւ լարուածութիւնը կրնայ ծաւալիլ եւ առաւել խճճուիլ: Թէպէտ խնդրոյ առարկան Ժիրայր Սեֆիլեանն է, բայց սա՝ երեւութապէս. անոր ձերբակալութիւնը առիթն է մի զուցէ, սակայն՝ տագնապը ունի աւելի խոր արմատներ: Անհնար է չնկատել, որ տարիներու կուտակուած զայրոյթի մը պոռթկումն է որ կը պատահի, չարաշահութեանց եւ անարդարութեանց երկար շղթայի մը ժայթքումն է դէպքը: Անոր անցեալը կը հասնի մինչեւ Հոկտեմբեր 27 (1999) եւ Մարտ 1 (2008), ընկերային-տնտեսական ճգնաժամ, բարոյա-հոգեբանական գալարում, ահագնացող հայրենալքում, յուսահատութիւն եւ անյուսալի հիասթափութիւն. մաղձ ու ոխ. անհանդուրժողութիւն եւ ատելութիւն ամբարած են մարդիկ ի տես սանձարձակ եւ կամայական իշխանութեանց:

Պալարը պիտի պայթէր եւ պայթեցաւ:

Ինչո՞ւ: Խօսքը տանք Մովսէս Խորենացիին եւ դուք կրնաք գտնել անուններն ու հասցէները ստեղծուած իրավիճակին պատասխանատուներուն:

«Կրօնաւորները կեղծաւոր, ցուցամոլ, սնափառ, պատուամոլ, քան թէ աստուածասէր:

Վիճակաւորները հպարտ, դատարկապորտ, դատարկախօս, ծոյլ, գիտութիւններն ու վարդապետական գրուածքներն ատող, առեւտուր եւ կատակերգութիւններ սիրող:

Աշակերտները սովորելու մէջ ծոյլ, սովորեցնելու մէջ փութաջան, որոնք դեռ չսորված՝ աստուածաբան են:

Աշխարհականները ամբարտաւան, ստահակ, մեծախօս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասարար:

Զինուորականները անարի, պարծենկոտ, զէնք ատող, ծոյլ, ցանկասէր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, յելուզակ, աւազակներին համաբարոյ:

Իշխանները ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, յափշտակող, երկիր աւերող, աղտեղասէր, ստրուկներին համախոհ:

Դատաւորները տմարդի, ստախօս, խաբող, կաշառակեր, իրաւունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող:

Եւ առհասարակ սէրն ու ամօթը ամէնքից վերացած»:

Իրօք ողբալի է այն հասարակութիւնը, որուն առաջ նորդները չեն օգտուիր մեծերու խօսքերէն: Մինչ Խորենացի կը շարունակէ վրձինել իր օրերուն տխուր պատկերը այսպէս.

«Որովհետեւ մեզ տիրեցին խստասիրտ ու չարթագաւորներ, որոնք ծանր, դժուարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս. կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դաւաճանուած են, թշնամիները զօրացած. հաւատը ծախւում է այս ունայն կեանքի համար: Աւազակներ են գալիս անհատնում եւ շատ կողմերից. տները թալանւում են, ստացուածքները յափշտակւում, գլխաւոր մարդիկ կապւում են, յայտնի անձեր բանտարկւում են, դէպի օտարութիւն են աքսորւում ազնուականները, անթիւ նեղութիւններ են կրում ռամիկները, առնւում են քաղաքները, քանդւում են ամրոցներ, աւերւում են աւաններ, հրդեհւում են շինութիւններ, անվերջ սովեր եւ հիւանդութիւններ եւ բազմատեսակ համաճարակներ»:

93 տարիներ առաջ Յուլիս 24-ին (1923) Լոզանի դաշնագիրով մեծ պետութիւններ դամբանականը գրեցին մեր իրաւունքներուն, այնքան երազուած մեծ Հայաստանին, այնքա՜ն նահատակուած մեր ժողովուրդի դատին: Բայց՝ մենք այդ դամբանականին մեղսակից չե՞նք, քանի Մովսէս Խորենացիէն մինչեւ Խորենացի փողոց կը զբաղինք եղբայրասպանութեամբ, թալանով եւ փոխ-ցեխարձակումներով:

Այսօր, Խորենացի փողոց եթէ այցելէր, դարձեալ պիտի ողբար Մովսէս Խորենացին:

Բայց, ան ողբալու համար չգրեց, այլ՝ զգաստանալու:

Ինչո՞ւ կը յամենայ զգաստացումը:

# ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՅԱՄԱՅՆ ՅԱՅՈՒԹԵԱՆ

Ցաւում եմ ասելու, որ FORBES շաբաթաթերթը եւ Global Financial Integrity հաստատութիւնը տեղեկագրել են, թէ 9 միլիարդ եւ 800 միլիոն ամերիկեան տոլաներ ապօրինի կերպով դուրս են բերուել Հայաստանի Հանրապետութիւնից մի շարք իշխանաւորների մեղսակցութեամբ եւ տեղաւորուել են աշխարհի զանազան դրամատներում: Մեր բոլորի համար հասկանալի է, որ այդ գումարները պատկանում են Հայաստանին եւ Հայաստանի ժողովրդին: Արտասահմանեան դրամատներին ուղարկուած հսկայական այդ գումարները պատկանում են երկրի պիւտճէին, եւ սակայն Հայաստանի ժողովրդի սեփական աչքերի առաջ երկնասլաց ապարանքներ են կառուցւում յօգուտ երկրի իշխանաւորներին: Այսօր, մեր երկիրը ֆինանսապէս, քաղաքականապէս ապրում է դժուար պայմաններում, որովհետեւ մեր ղեկավարները պարարտացնում են իրենց գրպանները եւ ռեսուրսները, փոխանակ ստարելու բնակիչների եւ ժողովրդի ռազմավարական շատ ծանր վիճակի բարելաւմանը: Ես հաւատում եմ, եւ իրաւունք ունեմ մեր Նախագահ Սերժ Սարգսեանից խնդրելու պէս պահանջել, որպէսի աշխատի Հայաստանը դուրս բերել այս կոռուպացուած կացութիւնից:

Դժբախտաբար, 25 տարուայ անկախութիւնից յետոյ, դատարկ ու անկատար խոստումներ են տրւում մեզ իրավիճակի բարելաւման մասին: Ցաւում եմ ասելու, որ վերջին 15 տարիներին բազմաթիւ խոստումներ տրուեցին մեր ժողովրդին, սակայն, աւաղ, դրանք մնացին լոկ խոստումներ: Ի տես չիրագործուած խոստումների եւ բարեկարգումների, անյուսութեան մատնուած մեր ժողովուրդը լքում եւ հեռանում է Հայրենիքից: Պրն. Սարգսեան, դուք շատ լաւ գիտակցում էք, որ փրկելու համար մեր երկիրը բոլոր վտանգներից եւ կորուստներից, առաջին հերթին անհրաժեշտ է ֆինանսապէս զօրաւոր լինել՝ բարեփոխումներ կատարելու համար երկրում: Հասնելու համար այս անյետաձգելի նպատակի իրագործման, դուք պէտք է քաջութիւնը ունենանք մի շարք պետական կամ ոչ պետական այրերից պահանջելու այն հսկայական գումարների վերադարձը, որոնք իրենց պաշտօնները չարաշահելով գողացել են այդ գումարները կառավարութեան պիւտճէից:

Ես վստահ եմ, որ տեղեակ էք այն մասին, որ աշխարհում կան օրէնքներ, որոնք պաշտպանում են երկրի եւ ժողովրդի իրաւունքները: Թէեւ կան մարդիկ, որոնք չարաշահում են իրենց ուժը՝ գողանալու համար կառավարութեան եւ երկրին պատկանող կապիտալները, կայ նաեւ միջազգային օրէնք՝ նրանց պատասխանատւութեան կանչելու եւ դատելու, կարեւոր չէ թէ ո՛ր երկրում են ապաստանել նրանք: Ես վստահ եմ, որ որպէս մեր նախագահը եթէ դիմէք նման քայլի, գողացուած այդ գումարների զգալի մասը գոնէ վերադարձուի մեր երկրի պիւտճէին, եւ միմիայն այս կերպով Հայաստանը դուրս կը գայ տնտեսական ճգնաժամային իրավիճակից:

Իմ կոչն է Հայրենիքի եւ Սփիւռքի հայութեան՝ ականջ տալ իմ այս խոհերին եւ պահանջել Նախագահ Սերժ Սարգսեանից վերահասու լինել այս իրականութեան:

Խնդրում եմ ազատ զգացէք տեղադրելու այս կոչը ձեր դիմատետերի (facebook) կայքէջում, որը մեծ նշանակութիւն ունի մեզ համար:

Խնդրում եմ մի վարանէք այս առթիւ ներկայացնելու ձեր մտածումները:

Յովհաննէս Բալայեան
Kach Nazar Newspaper and
Kach Nazar Live Show


ՍԴՀԿ

Արեւմտեան Ամերիկայի Շրջան

ԿԱՅԾ

Երիտասարդական Միութեան նախաձեռնութեամբ՝

Դասախօսութեան Երեկոյ

«Ազատ Անկախ Հայ - Ազատ Անկախ Հայաստան»

Կը Զեկուցէ՝

Յարութ Տէր Դաւիթեան

Հինգշաբթի 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2016, երեկոյեան ժամը 8:00-ին
ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Սրահէն ներս:

1060 N. Allen Avenue
Pasadena, CA 91104

Հիւրասիրութիւն
Մուտքը Ազատ

# Թրքական Գաղտնի Փաստաթուղթերը Հայութեան Մասին

## Wikileaks-ի վերջին գաղտնազերծումներուն մէջ տեղ գտած է Վարդգէս Եղիայեանի անունը



*Թուրքիոյ մէջ 15-16 Յուլիսին տեղի ունեցած ռազմական յեղաշրջման փորձէն ետք պետական եւ մասնաւոր գաղտնի փաստաթուղթեր գաղտնազերծող միջազգային կազմակերպութիւնը՝ Wikileaks-ը, ի պատասխան Թուրքիոյ մէջ զանգուածային ձերբակալութիւններուն, հրապարակած է Թուրքիոյ իշխող քաղաքական ուժին պատկանող հարիւր հազարաւոր գաղտնի փաստաթուղթեր՝ մօտ 300 հազար ելեկտրոնային նամակներ, որոնցմէ ամենահինը թուագրուած 2010, իսկ վերջինը՝ 2016 թուականի Յուլիս 6:*

*Նամակները հասած են յեղաշրջման փորձէն 1 շաբաթ առաջ եւ հրապարակուած անմիջապէս ռազմական իրադարձութիւններէն ետք: Թուրքիոյ կառավարութիւնը տակաւին չէ մեկնաբանած փաստաթուղթերու հրապարակումը եւ անոնց առընչուող մեկնաբանութիւնները: Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» (AKP) կուսակցութեան հասցէով ղրկուած նամակներու մէջ մեծ թիւով թղթապանակներ կան, որոնք կ՛առընչուին հայութեան ու Հայաստանին:*

*Բացայայտուած փաստաթուղթերուն մէջ կը նշուի, որ թրքական լոպպինկը համապատասխան պատրաստուածութիւն չէ ունեցած հակառակորդի ազգային կառոյցներու իրականացուցած գործողութիւններուն դիմաց: Փաստաթուղթերու մէջ տեղ գտած է **ԱՄՆ** բնակող հայ փաստաբան Վարդգէս Եղիայեանի անունը: Կը նշուի նաեւ, որ յատկապէս հասարակութեան հետ կապերու բնագաւառէն ներս օտար, հակառակորդ լոպպիստական ուժերու իրականացուցած գործունէութիւնը՝ օտար լեզուներով հրատարակուած բազմաթիւ պատմական գիրքեր, ուսումնասիրութիւններ, աշխատութիւններ, վէպեր, պատմուածքներ, թեմատիկ ֆիլմեր, փաստավաւերագրական աշխատութիւններու ասպարէզի մէջ Թուրքիոյ եւ թրքական աշխարհի դէմ ապատեղեկատուական նախաձեռնութիւններ, մեծ յաջողութիւններ գրանցուած են: Ըստ Wikileaks-ի գաղտնազերծումներու, հակառակորդ համարուող օտար էթնիք ենթակառոյցներու մէջ առաջին տեղը կը գրաւէ հայկական սփիւռքը, որուն թէ՛ հասարակութեան հետ յարաբերութիւններուն մէջ եւ թէ՛ անոր զուգահեռ այլ բնագաւառներէ ներս ծաւալած գործունէութիւնը բաւականին մեծ տարածութիւն կտրած է: Այդ ամէնուն մէջ առաջինը կ՛առանձնացուի հայկական սփիւռքի կողմէ սկսած եւ յաջողութեամբ շարունակուող Հայոց ցեղասպանութեան ժամանակ ապահովագրուածներու փոխհատուցումներու վճարման նախաձեռնութիւնը:*

*2004-ին ամերիկեան New York Life ընկերութենէն հայերու ստացած 20 միլիոն ամերիկեան տոլարով առաջին պտուղները տուած գործընթացը շարունակուեցաւ 2007-ին՝ թրքական OYAK եւ ֆրանսական AXA ընկերութիւններէն վերցուած 14.4 միլիոն ֆրանկով եւ ետքը 2009 թուականին Սապանճըներուն պատկանող AVIVASA-ի գործընկերը հանդիսացող անգլիական AVIVA ընկերութեան դէմ 10.000 հայ դատական հայց ներկայացուցին: Սապանճըներու եւ հետեւաբար Թուրքիոյ ազգային հարստութենէն եւս 40 միլիոն տոլար վերցնելուն նպատակադրուած հայկական խումբերը նպատակ ունէին շարունակելու գործընթացը Օսմանեան ժամանակաշրջանին հայերուն ապահովագրական կտրոններ վաճառած շուրջ 28 օտարերկրեայ ապահովագրական ընկերութիւններու հետ: Հայերու այս ծրագիրները ինչպէս կը նշէ Wikileaks-ը, հիմնուելով թրքական նամակագրութեան վրայ, New York Life ապահովագրական ընկերութեան եւ AXA/OYAK նախաձեռնութեան ճարտարապետ՝ դոկտոր Վարդգէս Եղիայեանի կողմէ շրջանառութեան մէջ դրուած է: Աղբիւրը նաեւ կը նշէ, որ այդ առումով 2011 թուականին նոր նախաձեռնութիւններ եղած են: **ԱՄՆ-ի Գալիֆորնիա նահանգի Լոս Անճելըսի ֆետերալ դատարանի հայերը նոր դատեր բացած են.***

*1-Ամերիկացիներու կողմէ գործարկուող Ինճիրլիք ռազմակայեանի տարածքը անոր սեփականատէրը հանդիսացող 3 հայու վերադարձնել կամ ալ որպէս փոխհատուցում վճարել 100 միլիոն տոլար:*

*2- Զիրաաթ գիւղատնտեսական դրամատան եւ Թուրքիոյ Հանրապետութեան կեդրոնական դրամատան դէմ բացուած դատերն ու 1915 թուականէն առաջ հայերու աւանդներու վերադարձը: Վերոնշեալ դրամատուներու 19 սեպտեմբեր 2011-ին իրականացուցած պաշտպանութիւնը ի վերջոյ 19 դեկտեմբեր 2011-ին դատարանի կողմէ քննութեան տակ առնուած է, եւ եթէ դատարանի որոշումը կայացուի Թուրքիոյ դէմ, ապա վերոնշեալ դրամատուներու **ԱՄՆ**-ու մէջ գտնուող ունեցուածքը պիտի բռնագրաւուի եւ որպէս փոխհատուցում տրուի հայերուն:*

*3-Եւ աւարտին Հայերը աչք դրած են նաեւ Ջանքայայի նախագահական նստավայրին: Նախապէս Գասպարեան ընտանիքին պատկանող այս գոյքը նոյնպէս կրնայ դատարանէն ներս դատի առարկայ դառնալ: Թուրքիան ծրագիր դիտողի կարգավիճակի մէջ յայտնուած է եւ այս զարգացումները ապագային միջազգային դատարաններուն մէջ Թուրքիոյ դէմ կրնան վերածուիլ իրաւական գործընթացի, որ Թուրքիան հիմա չի կարեւորեր եւ ասոր հետ կապուած ո՛չ բլան A, ո՛չ ալ բլան B ունի: Հայերը գոնէ համաշխարհային հանրութեան առջեւ եւ օրինակ UNESCO-ի պէս կազմակերպութիւններու շրջանակէն ներս մեծ յաջողութիւններ արձանագրած են: Ասոնք հողային, գոյքի փոխհատուցման եւ Թուրքիոյ մէջ հին հայկական շինութիւններու հարցերն են: Այս խնդիրներու շուրջ ալ Թուրքիան ոչ մէկ ծրագիր չունի:*

*Օրինակ UNESCO-ն, հայկական նախաձեռնութիւններէն ետք 1976 թուականին Ազգային փոքրամասնութիւններու մասին զեկոյցի 32-րդ յօդուածի շրջանակներէն ներս յայտարարած է Թուրքիոյ՝ ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներու որոշ ոտնահարումներու մասին: Շատերը կ՛ուզեն, որ UNESCO-ն որպէս պատմական կառոյցները պահպանող կազմակերպութիւն, Թուրքիոյ մէջ գտնուող պատմական կառոյցները իր հսկողութեան տակ առնէ: Սակայն որպէսզի UNESCO-ն կարենայ իր հսկողութեան տակ առնել, պէտք է հրաւէր ստանայ այն երկրէն, ուր կը գտնուին տուեալ պատմական շինութիւնները: Սակայն որոշ մասնագէտներ կը նշեն, որ այս հարցին մէջ պէտք է ուշադիր ըլլալ: Թուրքիոյ արեւելեան շրջանը գտնուող հայկական պատմական յուշարձանները կ՛ուզենք տեսնել աւելի պաշտպանուած, սակայն անոր ուղղուած գործողութիւնները կրնան մնացած յուշարձաններն ալ վտանգի տակ դնել եւ արագացնել զանոնց կործանման գործընթացը, եթէ թուրքերուն ճնշման ենթարկենք: Այսինքն, այլ կերպ ըսած, UNESCO-ի զեկոյցին մէջ կ՛ըսուի, որ այս խնդրի շուրջ Թուրքիան զգուշացնելը վտանգաւոր է, քանի որ անոր հետեւանքով կրնայ ազգը աւելի թշնամական դառնալ եւ հակառակուելով զգուշացումներուն մնացած քանի մը յուշարձաններն ալ գետնին հաւասարեցնել:*

*Ինչո՞ւ յատկապէս այս օրերին է ընդգծւում, ներկայացւում նման տեսակէտը. «Բարի լինենք մեր թշնամիների նկատմամբ...»:*

*Թոյլ տուէք չհամաձայնել, հակառակուել ձեր «աստուածահաճոյ» փիլիսոփայութեանը, որովհետեւ ոչ մենք, ոչ էլ մանաւանդ դուք աստուածներ չենք, եւ չարիքը ներելը անթոյլատրելի է, յատկապէս, երբ մի ամբողջ ժողովրդի մասին է խօսքը: Նաեւ անկարելի է, դէմ է հենց բարութեան բնութեանը: Բարութիւնը չի կարելի իմաստազրկել, մսխել, գործիք դարձնել չարի ձեռքին: Նաեւ ասում են. «Բարութիւնն անպաշտպան է»: Զպէտք է անպաշտպան լինի: Ամէն լաւը այս աշխարհում պէտք է պաշտպանուած լինի, որովհետեւ չարը միշտ արթուն է: Մի՞թէ թշնամին առաջինը չի ոչնչացնում միտքը, մտաւորականին: Եւ այդ պատճառո՞վ է, որ դուք դուրս էք պայքարից. գիջե՞լ էք դիրքերը, ժողովրդի սերուցք, ծաղիկ, այսպէս կոչուած. հրաժարւո՞ւմ էք ժողովրդի հետ լինելուց, ժողովրդի կողքին լինելուց: Ձեր իսկ «անվտանգութեա՞ն» համար... Դիրքերը գիջելը դաւաճանութիւն է եւ պարտութիւն, կործանման սկիզբ, ոչ միայն պատերազմի դաշտում:*

*Եւ ի՞նչ արժէ ձեր արուեստը առանց ձեզ ծնող ժողովրդի: Թէ՞ դուք արդէն համաշխարհային մեծութիւններ էք: Նոյնիսկ համաշխարհային մեծութիւնները վերադառնում են տուն, հայրենիք, իրենց վերջին հանգրուանը:*

*Հայ արուեստագէտը, ցաւօք, չի կարող սոսկ գեղագէտ լինել մինչեւ այն բաղձալի օրը, երբ իսկապէս անկախ, ուժեղ ու երջանիկ կը լինի ժողովուրդը, հայրենիքը: Հայրենիքը ներողամտօրէն ընդունում է իր բոլոր զաւակներին՝ հանճարեղ-մոլորեալ: Բայց դրա համար նախ հայրենիք է պէտք ունենալ: Մենք դատապարտուած ենք ոչ միայն գեղագէտ, այլ նաեւ քաղաքագէտ ու զինուոր լինելու, ինչպէս մեր բազում մեծերը: Իսկ մենք այսօր «մեծ» լինելուն դէմ չենք, սակայն չենք ցանկանում կիսել նրանց ճակատագիրը, որ հիմնականում ողբերգական է: Սակայն նաեւ եղել են երջանիկ հայ արուեստագէտներ՝ որոշակի պատմական բարենպաստ պահի: Թերեւս փորձենք այդ «պահե՞րը» երկարաձգել, դարձնել ժամանակներ... Մի՞թէ դա չէ ամենքիս երազանքը: Թէ՞ ջարդենք ծաղիկը, իսկ պտուղները եթէ լեղի չեն, բայց հաստատ արնահամ են, «վայելենք»:*

*Բարութիւնը պէտք է պաշտպանուած լինի, որպէսզի չարը իր մագիլներով ու վարակիչ մետաստազներով վերջնականապէս չկլանի այն մաքուրն ու ազնիւը, որ դեռ մնացել է: Ազատութեան տենչը միշտ էլ եղել է մեր արեան մէջ, մեր երակներում եւ երազներում եւ դրա համար ճիշտ ժամանակ, սթափ միտք եւ կուռ շարքեր են պէտք՝ յաղթանակելու, յաղթանակը պահելու, պահպանելու եւ արդար պտուղները վայելելու համար:*

*Փորձենք մի փոքր հեռուն գնալ, կը տեսնենք, որ այդ երանելի անկախութիւնն էլ մեզ պարտադրուեց, մենք դրան անպատրաստ էինք: Մենք պարզապէս յարմար խաղաքարտ էինք: Եւ շարունակում ենք մնալ... արդէն օգտագործուած խաղաքարտ, որ կարելի է աղբարկղ նետել: Այդ միտքը միայն իմը չէ, ժամանակին, երբ մեզ հրում էին իբր ազատութեան՝ սուտ երդումներով ու կեղտոտ խաղերով, որոշ մտաւորականների՝ ժողովրդին սադրանքներից հեռու պահելու, զգուշացնելու, փրկելու փորձի համար ոչնչացրին: Իսկ մենք, թէպէտ սովետական տարիներին, սակայն խելացի քաղաքական գործիչների եւ ժողովրդի շնորհիւ հարուստ, ծաղկուն երկիր էինք ստեղծել՝ բոլոր առումներով: Արժանապատիւ, լուրջ մրցակից լինելով մեր դարաւոր ոսոխի դէմ:*

*Սակայն շնորհիւ ծախուածների ու դաւաճանների, երկիրը քարուքանդ անելու յստակ ծրագրով՝ մենք այսօր ունենք այն, ինչ լաւ տեսնում ենք բոլորս:*

*Այսօր այդ ծրագրի արուեստատգէտ գաղափարախօսները լուռ են, իսկ քաղաքատգէտները, որ աւելի պնդաճակատ են, շարունակում են լկտիաբար փիլիսոփայել, որովհետեւ դեռ չեն աւարտել իրենց սեւ գործը: Ամենաթողութեան պայմաններում ջարդել, սպանել, վաճառել ամէն բան ու ամէն մէկին, ով իրենց դէմ կը կանգնի: Եւ... ցաւօք, ձեր «բացակայութեան» պատճառով նրանք յաջողեցին: Կատարեցին «սրբազան պարտքը» իրենց տէրերի ու մեր թշնամիների առաջ: Դուք այդ վարձկաններին ինձանից լաւ էք ճանաչում:*

*Ժամանակին, երբ դուք «շփոթուած» էիք ու անգամ վախենում էիք մտածել այդ մասին, ես գրում, բարձրաձայնում էի դրանց անուններն ու արարքները: Լալու չափ խնդալու է՝ անկա~խ ենք, երգում ենք...«Զարթնիր, լաօ...», այդ ո՞ւմ համար, երգերո՞վ ենք պահելու մեր անկախութիւնը, մեր կանաչ ծիլերը ջարդելո՞վ... Ժողովուրդը լուրջ ընդունեց այդ անկախութիւնը եւ տէր կանգնեց: Ինչպէս իրենց պարտքը կատարեցին եւ կատարում են մեր պահապան 18-20 տարեկան զինուոր-զաւակները, որոնց իբրեւ թնդանօթի միս օգտագործեցին քո փառապանծ իշխանութիւնները: Մեր կանաչ ծիլերը ջարդելով, օրը ցերեկով, պարզից էլ պարզ ծրագրով, յանցա-*

Շար.ը էջ 19

NOW OPEN IN GLENDALE

Artos
ARMENIAN & SPECIALTY PIZZAS




1360 E. Colorado St. Glendale CA 91205
Tel: 818-546-5555 E-mail: info@artospizza.com
Artospizza.com

# «ԹՈՒՄՈ»ՅԻ ՅՂԱՑՔԸ

Հայաստանի «Թումո»ն Միջազգային Ճանաչումի Կ'արժանանայ Իբրեւ Կրթական Նորարար Կեդրոն, Նուիրուած Պատանիներու եւ Երիտասարդներու Դաստիարակութեան

ՓԱՆՈՍ ԹԻԹԻԶԵԱՆ

«Թումո» (www.tumo.org) կեդրոնը վեց յարկանի հսկայ կառոյց մըն է Երեւանի «Թումանեան Այգի»ի գեղատեսիլ տարածքին մէջ: Իր հիմնադրութենէն քիչ ժամանակ ետք, ան կեդրոնական ուշադրութեան եւ գնահատութեան առարկայ դարձաւ բովանդակ Հայաստանի մէջ:

Մօտէն ճանչնանք զայն:

Բացայայտ իրողութիւն է որ ազգի մը յաջողութիւնը կամ ձախողութիւնը ուղղակիօրէն կախեալ է անոր ձեռք բերած նորարարութենէն (innovation) եւ բարգաւաճումէն:

Հարց է թէ, իրապաշտօրէն խօսելով, ի՞նչ կարելի է ակնկալել Հայաստանի նման փոքր, բնական հարստութենէ զուրկ եւ յարաբերաբար դեռ նոր իր անկախութեան տիրացած ու անցումի շրջան մը բոլորող երկրէ մը: Նման պայմաններու տակ գտնուող երկրէ մը ի՞նչ աստիճանի յաջողութիւն կարելի է տրամաբանօրէն ակնկալել:



Նման հարցադրումի մը պատասխանը պէտք է փնտռել «Թումո» կեդրոնին 60,000 քառ. ոտք տարածութեամբ կառոյցէն ներս:

Ի՞նչ ըսել կ'ուզենք: Այժմ նայեցէք թէ որ աստիճան «Թումո» կեդրոնի յաջողութիւնները միջազգային ուշադրութեան եւ գնահատանքի առարկայ դարձած են:

Արդարեւ, վերջերս ֆրանսատառ «We Demain - Une Revue Pour Changer D'Epoque» նորարարական իրագործումներու նուիրուած հանդէսը, որուն թղթակիցը տարի մը առաջ այցելած էր կեդրոնը, իր դասաւորման մէջ առաջին դիրքի վրայ կը զետեղէ «Թումո»ն, ստեղծագործական ճարտարագիտութեան մարզին մէջ, համեմատելով զայն միջազգային նմանօրինակ այլ դպրոցներու հետ, ինչպիսին են Սիլիքոն Վէլիի Այլընտրանք Դպրոցը, «AltSchool of Silicon Valley», Թոքիոյի Ֆուճի Մանկապարտէզը, «Fuji Kindergarten» եւ Սթիւ Ճապզ Դպրոցներու ցանցը «Steve Jobs School»: Վերոյիշեալ գնահատանքը բնականաբար պատիւ կը բերէ մեր ժողովուրդին եւ հայրենիքին, նուազագոյնը ըսած ըլլալով:

Մարդկային որեւէ մեծ իրագործումի ետին պէտք է փնտռել մեծ ղեկավար կամ առաջնորդ մը: Այդ մէկը, այս պարագային Սէմ Սիմոնեանը, Հ.Բ.Ը.Միութեան փոխ-նախագահն է, անմիջական գործակից ունենալով իր շնորհալի տիկինը՝ Սիլվա Սիմոնեանը: Անոնք էին որ իրենց առատաձեռն ու մեծղի գումարներով մէջտեղ բերին «Թումո»յի կերպարը, բոլորովին անվճար եւ անխտիր արդիական ուսում եւ դաստիարակութիւն ջամբելու համար Հայաստանի 12-18 տարեկան պատանիներուն եւ երիտասարդներուն:

Ահա կերպը, երկիր մը ճիշդ ուղղութեամբ շարժելու դէպի վերելք եւ յառաջդիմութիւն:

Թումոն ճշգրիտ կերպով բնութագրելու համար կը խորհինք թէ նախ պէտք է ըսենք թէ ան ինչ չէ:

«Թումո»ն աւանդական դպրոց մը չէ: Ան չի ծառայեր պարզապէս անոնց, որոնք ի վիճակի են դպրոցական ծախսերը հոգալու: Ան դաստիարակութեան գործը պատանիներու համար չի վստահիր դասական գործելակերպի: Ուսուցման աւանդական մեթոտներ եւ գործելակերպեր չ'որդեգրեր «Թումո»ն: Այս կերպով չի մօտենար նոր սերունդին ամենաարդիական դաստիարակութիւն տալու գործին: Մէկ խօսքով, կարելի է «Թումո»ն որեւէ ձեւով բնութագրել, ի բաց առեալ "education as usual" որակումէն:

«Թումո»ն մեծ տեսիլքի մը (vision) արդիւնքն է: Աւելի ճիշդ բնութագրելու համար զայն աւելցնենք նաեւ «Թումո»ն գործի վերածուած ապրող տեսիլք մըն է» (vision in action): Բնականաբար լաւագոյնս պիտի ըլլար խօսքը նոյն ինքն Սէմ Սիմոնեանին տալ: Ահա թէ ինչ կ'ըսէ Սէմ Սիմոնեան.

«Թումո» կեդրոնը ստեղծագործ ճարտարագիտութեան մարզի մէջ անվճար ծրագիր մըն է: Ծրագիր մը, որ հազարաւոր պատանիներու առիթ կ'ընծայէ ճարտարագիտական նորագոյն զարգացումներուն ծանօթանալու եւ հմտութիւն ձեռք բերելու:

Մասնակցող պատանիները եւ երիտասարդները իրենց սեփական ուղղութիւնը կ'ընտրեն եւ կը ծանօթանան ծրագիրներու, որոնք զիրենք ատակ կը դարձնեն մրցակցելու համաշխարհայնական մակարդակի վրայ:

Մենք կը ջանանք երիտասարդ սերունդին տալ մշակուած կարողութիւններ (skills) եւ ինքնավստահութիւն, որպէսզի մէկ կողմէն, անոնք կարենան իրենց կարողութեան առաւելագոյն աստիճանին հասնիլ, միւս կողմէ նաեւ ընդարձակել իրենց համաշխարհային տեսադաշտը:

Մենք կը ջանանք մեր նոր սերունդը զօրացնել, որպէսզի ան կարենայ, ազատ մտածողութեամբ, գործունեայ դեր վերցնել ընկերային հաւաքական կեանքի մէջ: Մեր տեսիլքը այն է, որ իւրաքանչիւր պատանիի բարձրագոյն ուսում եւ դաստիարակութիւն տանք, որպէսզի անոնք ի վիճակի ըլլան նուազեցնելու արտագաղթը եւ կարենան ընկերային, մարդկային զօրեղ հիմեր զարգացնել:

Ձեռներէցութիւն, ճարտարարուեստ եւ անկախ մասնագիտութիւն, այսօրուան ուղղութիւններն են: Իբր ազգ մենք լաւագոյն աւանդութիւնները ունինք այդ ուղղութիւններով: Նոյն ձեռներէցութեան հասկացողութեամբ պէտք է մօտենանք կրթութեան եւ անոր փոխուող իրականութիւններուն»:

Պարզ, շօշափելի, հեռահաս եւ լուսամիտ խօսքեր, միաժամանակ հայրենական վերելքի ամենէն իմաստուն ճամբան ցոյց տուող, որոնք ոչ մէկ յաւելեալ ակնարկութեան տեղ կը թողուն::

«Թումո» կեդրոնին վերաբերեալ աւելի լայն տեղեկութիւն տալու համար աւելցնենք հետեւեալը: «Թումո»ն, ինչպէս մանրամասնուեցաւ, ձրի, անվճար արտադպրոցական ծրագիր մըն է, որ 21-րդ դարու նորագոյն ճարտարագիտական մեթոտներով, կը ջանայ իւրաքանչիւր պատանիի մէջ պեղել, զարգացնել ու խորացնել բնատուր կարողութիւնները, արուեստի եւ գիտական մարզերու մէջ: Ծրագիրը թէեւ արտադպրոցական իր բնոյթով, սակայն դպրոց մըն է ինքնին, միշտ բաց, ճկուն եւ իւրայատուկ ժամանակացոյցով: Հոս կ'ուսանին աւելի քան 6000 պատանիներ եւ երիտասարդներ 12-18 տարեկան, անհատական կամ խմբային ծրագիրներով:

Կեդրոնը օժտուած է աւելի քան հինգ հարիւր համակարգիչներով, բազմահարիւր IPad-ներով, եռաչափ (3D) տպագրիչներով, ինչպէս նաեւ նորագոյն եւ ամբողջական ծրագրաշարերով (programs):

Այս բոլորէն զատ «Թումո» կեդրոնը օժտուած է նաեւ յատուկ աշխատասենեակներով, շարժանկարային եւ լսարանային սրահներով եւ գործիքներով: Այս բոլորը շարունակաբար կը լրացուին նոր եւ վերջնագոյն միջոցառումներով:

«Թումո» կեդրոնէն ներս պարբերաբար կը գործադրուին բազմատեսակ ծրագիրներ, ստեղծագործական աշխատանքներու վերաբերեալ եւ այդ նպատակին համար կը հրաւիրուին այդ մարզերու ծանօթ լաւագոյն այցելու մասնագէտներ, կեդրոնէն ներս, կամ լսարանային հեռավար դրութեամբ աշխատանքները յառաջ տանելու համար:

«Թումո»ն ունի նաեւ երեք մասնաճիւղեր: Դիլիճան, որ կը հովանաւորուի Համաշխարհային Դրամատան (World Bank) կողմէ, նաեւ Կիւմրիի եւ Ստեփանակերտի մասնաճիւղերը, որոնք կը գործեն Հ.Բ.Ը.Միութեան հետ գործակցաբար: Այսպէս «Թումո»ն ունի աւելի քան 10,000 սաներ: Իտէալ նպատակակէտն է այս թիւը բարձրացնել մինչեւ 70,000-ի, հասնելով գիւղական բոլոր շրջաններուն, ներգրաւելով նաեւ այդ հեռաւոր շրջաններու երիտասարդութիւնը:

Հոս պէտք է կարեւորութեամբ շեշտել այն իրողութիւնը որ նմանօրինակ նորարար այլ նախաձեռնութիւններ եւս, որոնք մեծ վարկ կը վայելեն Հայաստանի թէ արտասահմանի մէջ, աշխոյժ գործունէութիւն կը ծաւալեն Հայաստանի մէջ, որ մրցակցային առաւելութիւն ունի որպէս փոքր երկիր իր սփիւռքով, նաեւ այն իրողութեամբ, որ այսօր այնտեղ գործող գերազանցութեան այդ կեդրոնները կոչուած են կրթելու յաջորդ սերունդը: «Թումո»ն, Այբ հիմնարկ դպրոցներու ցանցը, Մայքրոսոֆթ Նորարարական Կեդրոնը, ինչպէս նաեւ Դիլիճանի Միջազգային Գոլէճը, ոչ-դասական մօտեցումով ստեղծուած կրթական միջոցառումներ են, որոնք կը կերտեն գիտելիքներով զինուած, իրենց ուժերուն եւ ապագային հաւատացող սերունդ:

Հոս տեղին է դարձեալ մատնանշել գլխաւորաբար ճարտարագիտական (Technology) մարզի, գործարարական նախաձեռնութիւններ քաջալերող մթնոլորտի բարերար ազդեցութիւնը, պատանիներու եւ երիտասարդներու մօտ տաղանդներու դրսեւորումին, դրական տրամադրութիւններու զարգացման եւ փորձառու արհեստագէտներու հետ գործելու առիթներուն միջոցով:

Սակայն եւ այնպէս անվարան կրնանք ըսել, թէ «Թումո»ն հանդիսացած է նախակարապետը, երիտասարդ սերունդը դաստիարակելու վեհ գործին մէջ, արդի նորագոյն մեթոտներով ու նորարար եւ ստեղծագործական թէքնոլոժիով: Եւ որպէս այսպիսին, Սէմ եւ Սիլվա Սիմոնեաններու կատարած ազգասիրական եւ հայրենակերտման գործը, մեր նորագոյն պատմութեան մէջ փայլուն էջ մը պիտի գրաւէ:

Աւելցնենք նաեւ այն իրողութիւնը որ «Թումո» կեդրոնի շէնքի այլ բաժինները վարձուած են ճարտարագիտական տարբեր մարզերու մէջ նորարար աշխատանքներ

Շար.ը էջ 19

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry
1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

## ՄԱՐԴՈՑ 7 ՏԵՍԱԿ, ՈՐՈՆՑՄԷ ՊԷՏՔ Է ԽՈՒՍԱՓԻԼ

*Բոլորիս քաջ ծանօթ են մարդիկ, որոնք շրջապատի մէջ ժխտական ուժ կը տարածեն՝ իրենց ողջ էութեամբ: Նմանատիպ մարդիկ կրնան վատ ազդեցութիւն ունենալ դէպի յաջողութիւն տանող ձեր գործողութիւններուն վրայ: Արդիւնքներու հասնելու համար դուք պէտք է առաւելագոյն զգօնութիւն պահպանէք: Գրգռուածութիւնը եւ ճնշումը, որոնք կ’առաջանան տեսադաշտին՝ այդ տեսակ մարդոց յայտնուելով, աւելորդ խոչընդոտ կը դառնան, ուստի նմաններէն պէտք է հնարաւորինս խուսափիլ:*

*Կը ներկայացնենք «Թունաւոր» մարդոց եօթը տեսակ, որոնց հետ երբեք պէտք չէ գործ ունենալ:*

*1. Խարդախները. Այս մարդիկ խարդախութեան ոլորտի մասնագէտներ են: Անոնք շատ լաւ կրնան որոշել մարդու տկար կողմերը եւ գիտեն, թէ որ լծակէն պէտք է քաշել, որպէսզի միւսներուն ստիպեն ընել այն, ինչ որ ձեռնտու է իրենց:*

*-Ասոնց վտանգը. Այս մարդոց հետ յարաբերիլը բացասաբար կ’ազդէ ձեր համոզումներու համակարգին եւ սեփական արժանապատուութեան զգացումին վրայ: Անոնք ճանապարհներ կը կտրեն ձեզի ստիպելու ընել այն, ինչ որ դուք չէք ուզեր կատարել, ինչ որ ձեզ, իբրեւ անհատականութիւն, կ’աւերէ: Դուք կը սկսիք ապրիլ ոչ թէ ձեր, այլ այդ մարդոց առաջնահերթութիւններով եւ համոզումներով:*

*2. Նարգիզներ. Ասոնք սեփական կարեւորութեան սրուած զգացումով մարդիկ են, որոնք վարժուած են համարել, որ աշխարհը կը պտտի իրենց առանցքին շուրջ: Անոնք այնքան ալ խորամանկ չեն, ինչպէս նախորդները, սակայն նոյնպէս կը ձգտին շրջապատի մարդիկը իրենց ենթարկել: Սովորաբար նման մարդոց կ’ուզես ըսել. «Դուն տիեզերքի կեդրոնը չես»:*

*-Ասոնց վտանգը. Ասոնք սեւեռուած են իրենք իրենց եւ կեդրոնացած՝ միայն իրենց խնդիրներուն վրայ: Ձեր հետաքրքրութիւնները անոնց բացարձակ չեն յուզեր: Անոնք կը շահագործեն ձեզ, լիովին համոզուած են, որ ատիկա շատ բնական է, որովհետեւ բոլորը պէտք է զոհաբերուին յանուն իրենց:*

*3. Թերահաւատները. Այս մարդիկ չեն գնահատեր այն լաւը, որ կայ իրենց կեանքին մէջ: Եթէ դուք անոնց ըսէք,- «Այսօր հրաշալի, արեւային եղանակ է», անոնք կը պատասխանեն, որ -վաղը անձրեւ եւ ցուրտ պիտի ըլլայ: Եթէ անոնց հետ կիսէք ձեր ուրախութիւնը, անոնք անպայման պատճառ մը կը գտնեն ձեզ թունաւորելու:*

*- Ինչով վտանգաւոր են. Այս մարդիկ շրջապատողներէն կը խլեն ուրախութիւնը: Անոնք աշխարհին կը նային բացասաբար, ինչով եւ կը վարակեն բոլորը: Յարաբերելով այսպիսի մարդոց հետ, դուք նոյնպէս կը սկսիք ամէն ինչ մոխրագոյն տեսնել:*

*4. Քննադատները. Եթէ դուք որեւէ բան համարէք աչք շոյող եւ հետաքրքրական, ուրեմն նոյնը անոնք պիտի գնահատեն տարօրինակ եւ անհրապոյր: Եթէ դուք ոեւէ մէկը համարէք տաղանդաւոր եւ հեռանկարային, ուրեմն անոնք նոյն անձը պիտի որակեն յիմար եւ անշնորհք: Անոնց պէտք է միշտ մէկուն հետ բանավիճիլ, կը կարծեն, որ իրենց կարծիքը միակ ճիշդն է, իսկ անոնք, որոնք համամիտ չեն, յիմարներ են:*

*-Այսպիսիներուն վտանգը. Անոնք կը փորձեն ողջ աշխարհը յարմարցնել իրենք իրենց եւ ատիկա կը սկսին զիրենք շրջապատողներէն: Այդ մարդիկ չեն հասկնար, որ կեանքը առանց ատոր ալ հետաքրքրական է, որ բոլոր մարդիկ տարբեր են եւ իւրաքանչիւրը ունի իր կարծիքը: Անոնք կը սնանին ժխտական զգացումներով, զորս կը ստանան անվերջանալի բանավէճերու ընթացքին:*

*5. Երազը սպանողները. Ամէն անգամ, երբ դուք գաղափարներ կը ծնիք, այդ մարդիկ ձեզի կ’ըսեն, որ անոնց իրականացումը անհնար է: Երբ կ’աշխատիք որեւէ բանի հասնիլ, անոնք ձեզ վար կը քաշեն: Երբ դուք կ’երազէք որեւէ բանի մասին, անոնք առաջինը ձեզի կը տեղեկացնեն, որ ձեր երազանքները անիրականանալի են:*

*-Ինչով վտանգաւոր են երազ սպանողները. Անոնք սեւեռուած են այն բանի վրայ, որ կայ այժմ, լիովին մերժելով այն, որ կրնար եւ ըլլալ: Անոնք դիւրութեամբ կրնան քանդել ձեր ինքնավստահութիւնն ու հաւատքը սեփական ուժերուն նկատմամբ: Զարգացումն ու ինքնակատարելագործումը հնարաւոր են միայն այն պարագային, երբ մարդը պատրաստ է որեւէ նոր բանի:*

*6. Երեսպաշտները. Ասոնք այն մարդիկ են, որոնցմէ անընդհատ կեղծաւորութիւն կը յորդի: Երբ դուք զուարճալի պատմութիւն կը պատմէք, ի պատասխան անոնցմէ կը լսէք քաղաքավար ծիծաղ, թէեւ կը նկատէք, որ իրականութեան մէջ անոնց ծիծաղը չի գար: Առերես անոնք կ’ըսեն, որ կը սիրեն ձեզ, իսկ իրականութեան մէջ ծանօթ մարդոց կը պատմեն, թէ որքան յիմար եւ տհաճ մարդ էք:*

*-Ասոնց վտանգը. Այդպիսի մարդոց հետ յարաբերութիւնները մակերեսային են եւ անկեղծ չեն: Երբ դուք անոնց օգնութեան կարիքը զգաք, զանոնք չէք գտներ ձեր կողքը: Ձեր հետ ունեցած անոնց ջերմ յարաբերութիւնները ընդամէնը խաբկանք են:*

*7. Գուեհիկները. Ասոնք այն մարդիկն են, որոնք սովորութիւն ունին ամէն ինչ ընել ամենաանյարմար պահուն եւ ամենաանյարմար ձեւով: Անոնք ոչինչէն կը զգուշանան: Յաճախ այդպիսի մարդոց փոխարէն ստիպուած կ’ըլլաս դուն ամչնալ:*

*-Ինչով վտանգաւոր են ասոնք. Այս մարդիկ ոչ մէկ չափ ու սահման կը ճանչնան: Անոնք չեն յարգեր այլ մարդոց զգացումները եւ որեւէ ժամանակ կրնան դիւրութեամբ վիրաւորել ձեզ:*

*Եթէ կարելիութիւն ունիք խուսափելու անոնց հետ յարաբերելէ, ուստի օգտուեցէք այդ հնարաւորութենէն: Կեանքը բաւական կարճ է, որպէսզի անոնց վրայ ծախսէք ձեր ուժերն ու ժամանակը:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

## ՍՈՒՐՃԻ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Սուրճի հայրենիքը Եթովպիան է, ուր պահպանուած են անոր վայրի մացառուտները: Սուրճի ծառը առաջին անգամ նկարագրած է գերմանացի բժիշկ Ռաուվելֆը (1573 թուականին): Արեւմտեան Հայաստանի մէջ սուրճի ըմպելին տարածուած է 16-րդ դարու սկիզբը: Հետաքրքրական է, որ 1672-ին Ֆրանսայի մէջ բացուած առաջին սրճարանին տէրը՝ Փասկալ անունով, հայ եղած է:*

*Հիւսիսային Ամերիկայի մէջ սուրճ օգտագործած են 1670-ին: Սուրճը կը մշակուի 17-րդ դարէն Եմենի մէջ: Այդ երկրի Մոգգօ նաւահանգիստէն անիկա արտահանուած է աշխարհով մէկ: 20-րդ դարու սկիզբը սուրճ տեղափոխող նաւերէն մէկուն բեռնախցիկը փոթորիկի պատճառով ջուրով լեցուած է: Բեռնաթափումէն յետոյ նկատած են, որ այդ սուրճէն պատրաստուած ըմպելիի ազդեցութիւնը աւելի թոյլ է: Այդ պատահականութեան շնորհիւ սուրճը ստացած է աւելի մեծ տարածում, քանի որ քաֆէինի փոքր տոկոս պարունակող սուրճը կրնային խմել նաեւ առողջական խնդիրներ ունեցող մարդիկ: Եւ այսպէս. եթէ կ’ուզէք տնային պայմաններու մէջ նուազեցնել քաֆէինի տոկոսը, ուստի հատիկները որոշ ժամանակ պահեցէք ջուրի մէջ: Քիչ անց անոնք պիտի ուռին: Ջուրէն առանձնացուցէք հատիկները եւ լուացէք հոսող ջուրի տակ: Քաֆէինի պարունակութիւնը չմշակուած հատիկներուն մէջ կը տատանուի:*

*Լուծուող սուրճի մէջ քաֆէինի պարունակութիւնը աւելի բարձր է: Որոշ հետազօտողներ կը հաւաստիացնեն, որ լուծուող սուրճը բարենպաստ ներգործութիւն ունի մարմնի վրայ, որ անիկա ցանկալի է խմել կաթի կամ սերուցքի հետ խառնած վիճակով, սակայն ոչ անօթի ստամոքսին: Սուրճէն պատրաստուած ըմպելիները արտայայտուած բարերար ազդեցութիւն ունին հիփոթոնիայով հիւանդներու վրայ: Ժխտական ազդեցութիւն կ’ունենան սիրտ-անօթային որոշ հիւանդութիւններու, 12-մատնեայ աղիքի եւ ստամոքսի խոցի պարագային: Որեւէ հիւանդութեան պարագային սուրճի չափաբաժինը պէտք է որոշէ բժիշկը: Սուրճը կը պարունակէ քաֆէին (1,2%), ջուր (12%), շաքարանիւթեր (8%), սրճաթթու (9%), բջիջանիւթ (25%), ազոթային միացութիւններ (13%), ֆենոլային միացութիւններ, պիրիդին, քացախաթթու, վիթամին PP, E եւ այլ նիւթեր: Բովելէն յետոյ ճարպերու, ազոթային միացութիւններու եւ քաֆէինի պարունակութիւնը քիչ մը կ’աւելնայ, իսկ ջուրի, շաքարի, սրճաթթուի պարունակութիւնը կ’իջնէ 2-4 անգամ: Նիացինը (վիթամին PP) կը մասնակցի ուժանիւթի արտադրման բջիջներուն մէջ:*

*Սուրճը կը նուազեցնէ քոլեսթերոլի եւ ճարպի պարունակութիւնը արեան մէջ, կը լայնցնէ արիւնատար անօթները եւ կ’իջեցնէ ճնշումը, կը հանգստացնէ գլխացաւը, կը վերացնէ աղմուկը ականջներուն մէջ, օգտակար է գլխապտոյտի պարագային, կը բարելաւէ մարսողութիւնը, կը կանխէ սրտի կաթուածները:*

*Խորհուրդ կը տրուի քրոնիկ հիւանդութիւններու՝ լեարդի ցիռոզի, չարորակ ուռուցքներու, յատկապէս շագանակագեղձի ատենոմայի, փանքրէաթիթի պարագային: Քաֆէինի ցած պարունակութիւնը առանձնապէս չ’ազդեր սուրճի բարերար յատկութիւններուն վրայ: Նիացինը կ’օգնէ նաեւ յոգնածութեան, մկանային թուլութեան, վատ ախորժակի, սթոմաթիտի, լինտերու հիւանդութիւններու, սրտխառնուքի պարագային: Կը վերացնէ բերանի տհաճ համը եւ հոտը:*

*Սիսեռը շատ լաւ կը համակցուի սուրճի հետ, կ’աւելցնէ սուրճի օգտակար ազդեցութիւնը: Սուրճի եւ սիսեռի յարաբերութիւնը խառնուրդի մէջ կ’որոշէ խմողը: Շատ կարեւոր է նիացինի հետեւեալ յատկութիւնը. Կը նպաստէ սերոթինի արտադրութեան, կը պարգեւէ առողջ քուն եւ երջանկութեան զգացողութիւն: Վերջերս հետազօտութիւններու միջոցով պարզուած է, որ սուրճի լուծամզուածքը (իւղային, ջրային, սփիրթային) կը բերէ թուքի արտադրութենէն յառաջացող կազերու նուազում: Այդ կազերը բաւական տհաճ հոտ ունին: Սովորական ձեւով պատրաստուած սեւ սուրճը չի յանգեցներ նման արդիւնքի: Գիտնականները փորձեր կը կատարեն, որպէսզի ստանան տհաճ հոտերը վերացնող բուրմունք՝ սուրճի հատիկներէն:*

## ՈՐՈՇ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՄ ՍԽԱԼ ՍՆՈՒՆԴԻ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԵՂՈՒՆԳՆԵՐԸ ԿԸ ԲԱՐԱԿՆԱՆ ԵՒ ԿԸ ԿՈՏՐՏՈՒԻՆ

*Առողջ եղունգը պէտք է հարթ ըլլայ եւ ունենայ թոյլ կարմրաւուն փայլ: Եղունգները կ’աճին անդադար, 1 օրուան ընթացքին՝ 0,1 մմ, ի դէպ, աւելի արագ՝ մանուկ եւ ծեր հասակին: Որոշ հիւանդութիւններու կամ սխալ սնունդի պարագային եղունգները կը բարակնան եւ կը կոտրտուին: Նման պարագաներու խորհուրդ կը տրուի եղունգներուն քսել կիտրոնի հիւթ: Օգտակար է նաեւ 20-30 օրուան ընթացքին եղունգները 10-15 վայրկեան պահել քիչ մը տաքցուած բուսական (ձիթապտուղի, նուշի) իւղի մէջ:*

*Խորհուրդ կը տրուի վիթամիններով հարուստ սնունդ. միրգ, բանջարեղէն, կաթնամթերք: Բժիշկի դեղատոմսերով կարելի է ընդունիլ վիթամին*

*A: Եղունգներուն ներկը արագ կը չորնայ եւ աւելի երկար կը մնայ, եթէ քսելէն յետոյ եղունգները քանի մը վայրկեան ընկղմէք պաղ ջուրի մէջ:*



## ՌԻՕ-2016. ՀԱՅ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՃԱՆՐՈՐԴՆԵՐԸ, ԱԹԼԵՏՆԵՐՆ ՈՒ ԼՈՂՈՐԴՆԵՐԸ ՄԵԿՆԵՑԻՆ ՊՐԱԶԻԼԻԱ




Ռիոյում Օգոստոսի 5-ին մեկնարկելիք 31-րդ ամառային Օլիմպիական խաղերում Հայաստանի պատուիրակութեան մի մասն այս գիշեր մեկնեց մրցավայր: Երեւան - Մոսկուա - Տոհա - Ռիօ Տէ Ժանէրօ թռիչքով մեկնեցին Հայաստանի օլիմպիական հաւաքականի ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց թիմերը, աթլետներն ու լողորդները: Փաշիկ Ալաւերդեանի գլխաւորած թիմի կազմում օլիմպիական մայրաքաղաք մեկնեցին ծանրորդներ Ռուբէն Ալեքսանեանը, Գոռ Մինասեանը, Անդրանիկ Կարապետեանը, Սիմոն Մարտիրոսեանը եւ պահեստային Վանիկ Աւետիսեանը: Մեկնողների հետ չէր 85 կգ քաշային Առաքել Միրզոյեանը, ով աւելի ուշ է մեկնելու Ռիօ:

Կանանց թիմի կազմում Ռիօ մեկնեցին Նազիկ Աւդալեանն ու Սոնա Պօղոսեանը՝ կանանց Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Արտաշէս Ներսիսեանի հետ:

Ռիօ-2016-ում հայ աթլետները հանդէս կը գան 6 օլիմպիականներով: Ռոբերտ Էմմիեանի գլխաւորութեամբ Ռիօ ժամանեցին Ամալիա Շառոյեանը, Դիանա Խուբեսերեանը, Լիլիթ Յարութիւնեանը, Գայեանէ Ջիլոյեանը, Գոռ Ներկարանեանը եւ Լեւոն Աղասեանը: Հայաստանի պատուիրակութեան առաջին թիմի հետ օլիմպիական քաղաք մեկնեցին նաեւ լողորդներ Վահան Մխիթարեանն ու Մոնիկա Վասիլեանը:

Յիշեցնենք, որ Օլիմպիական խաղերի բացման շքերթում Հայաստանի դրօշակակիրն է լինելու Վահան Մխիթարեանը: Լողորդները Օլիմպիական քաղաք մեկնեցին առանց մարզիչի:

## ԵԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԸ ՅԱՂԹԵՑ ՊՈՒԼԿԱՐԱՑԻՆԵՐԻՆ




Պասքետպոլի տղամարդկանց Հայաստանի մինչեւ 20 տարեկանների հաւաքականը Յունաստանի Խալկիդա քաղաքում անցկացուած Եւրոպայի B դիւիզիոնի առաջնութեան վերջին խաղում 65:61 հաշիւով առաւելութեան հասաւ Պուլկարիայի թիմի նկատմամբ՝ տանելով երրորդ յաղթանակն այս մրցաշարում: 21 թիմերի պայքարում Հայաստանը գրաւեց 17-րդ տեղը:

Նախորդ երկու խաղերում Հայաստանի թիմը 74:68 հաշուով առաւելութեան էր հասել Էստոնիայի հաւաքականի, 65:62 հաշուով՝ վրացի բասկետբոլիստների նկատմամբ:

Նախքան այդ, Հայաստանի թիմը 56:67 հաշուով պարտուել էր մակեդոնացիներին, 54:70 հաշուով Պորտուգալիային, 44:78 հաշուով՝ Չեռնոգորիային:

## «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸՏԸ» ՊԱՐՏՈՒԵՑ «ԲՈՐՈՒՍԻԱՅԻՆ» ՄԽԻԹԱՐԵԱՆԸ ԳՐԱՒԵՑ ՆԱԽԿԻՆ ԹԻՄԻ ԴԱՐՊԱՍԸ




Անգլիական «Մանչեսթեր Եունայթըտը» խոշոր հաշուով պարտութիւն կրեց Դորտմունդի «Բորուսիայից» Շանհայում անցկացուած International Champions Cup ընկերական մրցաշարի առաջին խաղում՝ 1:4:

Գերմանիայի փոխախոյեանների կազմում դուբլի հեղինակ դարձաւ Գոնսալօ Կաստրոն, աչքի ընկան նաեւ Պիեր-Էմերիկ Օբամէեանգն ու Ուսման Դեմբելեն:

Ժոզէ Մոուրինյոյի գլխաւորած թիմի կազմում հեղինակութեան կոլը խփեց Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, որը նախկին թիմակից Ռոման Վայդենֆելերի պաշտպանած դարպասը Խուան Մատայի փոխանցումից յետոյ գրաւեց 59-րդ րոպէին եւ 7 րոպէ անց փոխարինուեց: Մխիթարեանն առաջին կոլը խփեց «Մանչեսթեր Եունայթըտում»՝ մասնակցելով երկրորդ հանդիպմանը:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ, ԲԱՅՑ՝ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ



«Ռուսաստանը կը մասնակցի 2016 թուականի օլիմպիական խաղերին, սակայն որոշակի վերապահումներով: Ռուսաստանցի մարզիկների մասնակցութեան կապակցութեամբ վերջնական որոշում պէտք է կայացնեն մարզաձեւերի միջազգային ֆեդերացիաները», - այսօր յայտարարել է Միջազգային օլիմպիական կոմիտէի նախագահ Թոմաս Բախը:

Բացի այդ նա նշել է, որ Ռուսաստանի սպորտի նախարարութեան ներկայացուցիչները չեն հաւատարմագրուելու Ռիոյի օլիմպիական խաղերին:

Հարկ է նշել, որ օլիմպիական խաղերին մասնակցելու իրաւունք են ստացել Ռուսաստանի 387 մարզիկ-մարզուհի, սակայն այդ երկրի 68 աթլետներն արդէն որակազրկուել են միջազգային ֆեդերացիայի կողմից: Միայն հեռացատկորդ Դարիա Կլիշինան կը մասնակցի Ռիօ-2016-ին, այն էլ որպէս անկախ մարզուհի:

Յիշեցնենք, որ վերջին աղմկահարոյց դոպինգային սկանդալների պատճառով Հայաստանի ծանրորդներ Տիգրան Մարտիրոսեանն ու Հռիփսիմէ Խուրշուդեանը նոյնպէս զրկուել են 2016 թուականի օլիմպիական խաղերին մասնակցելու իրաւունքից:

## ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ ՅԱՂԹԵԼՈՎ ԱՏՐՊԷՃԱՆՑՈՒՆ՝ ԴԱՐՁԵԼ Է ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ



Այս օրերին Մոսկուայում տեղի ունեցող կունգ ֆուի աշխարհի 5-րդ առաջնութիւնում յաջող է հանդէս եկել Հայաստանի ներկայացուցիչ Հայկ Գասպարեանը:

Ինչպէս տեղեկացնում է Հայաստանի կունգ ֆուի ֆեդերացիայի լրատուութեան բաժինը, մեր 55կգ քաշային մարզիկը 17-19 տարիքայինների խմբում մտել է եզրափակիչ, որտեղ պարտութեան է մատնել ատրպէյճանցի Օմար Ալահվերդիեւին եւ հռչակուել աշխարհի ախոյեան:

Ի դէպ, Ատրպէյճանի հաւաքականը 2015թ զրկուել էր աշխարհի առաջնութեանը մասնակցելու իրաւունքից՝ Լուուում տեղի ունեցած միջադէպի համար, երբ ատրպէյճանցի կունգֆուիստները յարձակուել էին մեր մարզիկների վրայ: Սակայն Ատրպէյճանի կունգ ֆուի ֆեդերացիան վերջերս ներողութիւն է խնդրել Հայաստանի ֆեդերացիայից, իսկ միջազգային ֆեդերացիան որոշել է փորձաժամկէտ տալ մեր հարեւաններին:

## ՈՒՍԷՅՆ ԲՈԼԹՆ ԱՆԳԵՐԱԶԱՆՑԵԼԻ ԷՐ ԼՈՆՏՈՆՈՒՄ




100 եւ 200 մեթր վազքի աշխարհի ռեկորդակիր, վեցակի օլիմպիական ախոյեան Ուսէյն Բոլթը Լոնտոնում մասնակցել է աթլետիկայի «Ադամանդէ լիգայի» հերթական փուլին: Ջամայկացի արագավազորդը մեկնարկել է 200 մեթր վազքում եւ յաղթել է 19.89 վայրկեան արդիւնքով:

200 մեթր

1. Ուսէյն Բոլթ (Ջամյակա)՝ 19,89

2. Ալոնսո Էդվարդ (Պանամա)՝ 20,04

3. Ադամ Ջեմիլի (Մեծ Բրիտանիա)՝ 20,07

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**
Կողակիցիդ հետ յարաբերութիւնդ նորոգէ եւ անտեղի կեցուածքներ մի ունենար: Ընտանիքիդ անդամներէն մէկը պէտք ունի քաջալերանքիդ: Շարունակէ կամաւոր աշխատանքներդ, եթէ անոնք քեզի գոհունակութիւն կը պատճառեն:
Բախտաւոր թիւերդ են: 5,14,22,29,32

**ՑՈՒԼ** **Ապրիլ 20-Մայիս 20**
Յանցանքներդ խոստովանելով, շատ աւելի հեշտ մթնոլորտ կը ստեղծես տանդ մէջ: Հաւաքոյթի ներկայ պիտի գտնուիս եւ մեծարանքի ու պատիւի պիտի արժանանաս: Մեծերուն թելադրութիւններուն հետեւէ:
Բախտաւոր թիւերդ են: 2,6,13,27,35

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** **Մայիս 21-Յունիս 20**
Հիւանդներ այցելելը առօրեայ կեանքիդ մէկ կարեւոր տեղը պէտք է գրաւէ: Անձնական նեղութիւններդ պատճառ չեն որ տանդ մթնոլորտը փոխես: Վտանգաւոր արկածախնդրութիւններէ զգուշանալու եւ հեռու մնալու ես:
Բախտաւոր թիւերդ են: 10,17,21,30,33

**ԽԵՑԳԵՏԻՆ** **Յունիս 21-Յուլիս 22**
Միշտ պատրաստ ես անկեղծ եւ դրական օժանդակութիւն բերելու շուրջիններուդ: Ճշմարտութիւնը խօսելու բնաւ մի վարանիր եթէ նոյնիսկ այդ պիտի վնասէ սիրելիիդ: Յոյս ունեցիր եւ յարատեւէ գործիդ յաջողութեան համար:
Բախտաւոր թիւերդ են: 1,18,24,31,34

**ԱՌԻԾ** **Յուլիս 23-Օգոստոս 22**
Բերնէդ ելած խօսքերը վատ թող չ'ըլլան, այլ շինիչ եւ քաջալերական: Առանց տրտունջի եւ առարկութիւններու վարուէ գործակիցներուդ հետ, անոնք ալ սխալական են քեզ նման:
Բախտաւոր թիւերդ են: 7,15,23,29,30

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
Ինքզինքդ զարգացուր այժմէական գիտելիքներով որպէսզի կարողանաս հետեւիլ ժամանակին: Ծայրայեղ մտածումներէ խուսափիր, իրապաշտ ըլլալով: Նոր գործի առաջարկ մը պիտի շփոթեցնէ քեզ եւ միտքդ խանգարէ:
Բախտաւոր թիւերդ են: 3,9,11,22,27

**ԿՇԻՌՔ** **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Գործիդ մէջ նոր անձի մը ներկայութիւնը քու գործդ պիտի թեթեւցնէ: Կարեւոր է որ համերաշխութեամբ աշխատակցիս այդ անձին հետ: Ընտանիքդ պտոյտ մը կը ծրագրէ: Վճռակամութիւնդ մտքի խաղաղութիւն կը բերէ կողակիցիդ:
Բախտաւոր թիւերդ են: 7,14,25,34,35

**ԿԱՐԻՃ** **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Մտահոգութիւններդ քեզ կը տանջեն եւ խորհուրդներդ չես կրնար կարգաւորել: Շատ պահանջատէր եղած ես եւ չես գոհանար: Քեզմէ պահանջուած գործերը լիուլի կատարելու ես առանց գանգատելու: Զգաստ եղիր միջավայրիդ մէջ:
Բախտաւոր թիւերդ են: 1,19,20,23,27

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
Ամիսներէ ի վեր սպասած մէկ փափաքդ, վերջապէս պիտի իրականանայ այս շաբաթ եւ ընտանիքիդ մէջ մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Շատ բարի ես եւ ամէն բան կ'ընես կողակիցդ գոհացնելու համար: Գործի յաջողութիւն մը պիտի ունենաս:
Բախտաաւոր թիւերդն են: 9,11,22,23,30

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 21**
Ինքզինքդ զսպելու դժուարութիւն կ'ունենաս երբ գաղտնիք մը յայտնուի քեզի: Տեսակէտդ պայման չէ որ յաճախ պնդես, թոյլ տուր ուրիշներուն իրենք զիրենք արտայայտելու: Նոր ասպարէզի մը նետուելու վրայ ես, մի տատամսիր:
Բախտաւոր թիւերդ են: 7,13,23,27,35

**ԾՈՎԱՆՈՅՇ** **Յունուար 22-Փետրուար 18**
Սիրտդ բեղուն է սիրով եւ բարիքներով: Զոհողութեամբ կը ծառայես բոլորին, մանաւանդ ընտանիքիդ անդամներուն: Մտավախութիւններդ քեզ շատ հեռու, գէշ տեղեր թող չտանին, ի զուր դուն քեզ պիտի նեղես: Շարունակէ ծրագիրներդ:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,22,23,34

**ՁՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**
Քեզմէ կ'ակնկալուի որ մտահոգութիւններդ խորհրդածես կողակիցիդ կամ սիրելիիդ հետ: Դուն քեզ մի դատապարտեր ձախողութեան մը պարագային, ուրիշներ ալ բաժին ունին այդ հարցին մէջ: Մեծ ծրագիր մը մի յետաձգեր:
Բախտաւոր թիւերդ են: 10,18,21,29,33

## ԵԴՈՒԱՐԴ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Շարունակուած էջ 8-էն

*դիւցազնավէպը ներառնուած էր Իւնեսքոյի մշակութային ժառանգութեանց մէջ:*

*Բացառիկ գործ մըն է նաեւ Նիւ Եորքի «Ազատութեան արձանը»: Արդարեւ 0.2 մմ բարձրութիւն ունեցող եւ զուտ ոսկէ շինուած այս մանրաքանդակը կը նկատուի աշխարհի ամենափոքր կրկնօրինակն եղող «Ազատութեան Արձանը»:*

*Ղազարեաններու մանրակերտ ստեղծագործութիւնները կ'արժէ որ իրենց ուրոյն տեղն ունենան աշխարհի կարեւորագոյն թանգարաններուն, ցուցասրահներուն եւ աճատական հաւաքածուներուն մէջ:*

*Նորանոր յաջողութիւններ Եդուարդ Տէր Ղազարեան կրտսերին:*

*Գ. ՄՈԼՈՅԵԱՆ*

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Շարունակուած էջ 8-էն

*Առ այդ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւնը ուրախութիւնը ունի յայտարարելու թէ Վեր. Պերճ Ճամպազեան չորս տարիներու ժամանակաշրջանի համար ընտրուեցաւ որպէս Միութեան Հովիւ, մօտէն հոգալու Միութեան հովիւներուն եւ եկեղեցիներուն հետ առնչուած նիւթերը եւ յաջս գաղութին ներկայացնելու Հայ Աւետարանական Միութիւնը:*

*ՀԱՀԱՄ Կլենտեյլ, Գալիֆորնիա*

## ԱՇՈՏ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՍՏԱՆՁՆԵՑ

Շարունակուած էջ 13-էն

*սանդած է Արարատ մարզի Նոյակերտ գիւղի միջնակարգ դպրոցին մէջ: 2011 թուականի փետրուարէն հայոց լեզու դասաւանդած է Հայաստանի Մխիթարեան կեդրոնէն ներս, ինչպէս նաեւ խմբագրած է «Մարզաշխարհ» շաբաթաթերթը (2011 Փետրուար-Յունիս): 2011-ի Օգոստոսէն կ'աշխատի ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի սփիւռքահայ գրականութեան ուսումնասիրութեան բաժնին մէջ: 2012-ի ապրիլէն 2013-ը աշխատած է նաեւ «Հայաստանի Հանրագիտարան» հրատարակչութեան մէջ: Կը հանդիսանայ «Գրանիշ» հանդէսի համախմբագիրներէն մէկը: Անոր ստեղծագործութիւնները թարգմանուած են ֆրանսերէն, սերպերէն, պարսկերէն, վրացերէն եւ անգլերէն լեզուներու:*

*Հեղինակ է բանաստեղծական երեք հատորներու՝ «Հրեշտակները սեղի ծայրին» (2001), «Հաւատացէք, քանի որ չէք հաւատալու» (2004), «Գրպանի բանաստեղծութիւններ» (2012), ինչպէս նաեւ այլ ստեղծագործութիւններ եւ թարգմանութիւններ:*

*Նշենք, որ մինչեւ մահկանացուն կնքելը, «Գարուն»ի խմբագրութիւնը կը վարէր ճանչցուած արձակագիր՝ Վարուժան Այվազեանը: Վաղ 70-ականներու գրական միջավայրին մէջ իր ուրոյն տեղը եւ դերը ունեցած «Գարուն» ամսագրի խմբագրի պաշտօն վարած են գրողներ՝ Վարդգէս Պետրոսեան, Լեւոն Անանեան (երկուքն ալ՝ վաղամեռիկ) եւ Մերուժան Տէր Գուլանեան:*

## ԳՐԻԳՈՐ ԵՐԶՆԿԱՑԵԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ Է

Շարունակուած էջ 13-էն

*կրկին մեծ է փրոֆէսոր Երզնկացեանի դերը: Համագործակցութեան որպէս արդիւնք ափրիկեան վիրաբուժութեան համակարգը մեծ բարեփոխումներ ունեցած է եւ համալրուած է նորագոյն եւ ժամանակակից միջոցներով ու սարքաւորումներով: Տարածաշրջանում արձանագրուած է նաեւ ուսանող վիրաբոյժներու թուի մեծ աճ, ինչպէս նաեւ Զիմպաւուէյի մէջ, Զամպիայի մէջ եւ Ռուանտայի մէջ մեծ թիւով ուսանողներ զարգացուցած են իրենց գիտելիքները եւ ծանօթացած են հիմնական վիրաբուժական մեթոտներուն:*

*Փրոֆէսոր Երզնկացեանը պարբերաբար Հայաստան կ'այցելէ եւ վիրաբուժական եւ բարեգործական գործունէութիւն կը կատարէ:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------------
**Address:** ---------------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip CodÐe:**------
**Country:** -------------³
**Tel :**----------------------- **Email:** --------------------------

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ՄԱՐԻԺԱՆ ՄՈՒՂԱԼԵԱՆ*

*Հանգուցեալ Տիկ. ՄԱՐԻԺԱՆ ՄՈՒՂԱԼԵԱՆի մահուան քառասունքին առիթով Կիրակի, 31 Յուլիս, 2016ին, յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ,* 2215 East Colorado Blvd. Pasadena 91107:

*Սգակիրներ՝*

*Տէր եւ Տիկ. Ռուբէն եւ Սոնա Մուղալեան*

*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ԼՈՒՍԻՆ ՃԷՊԷՃԵԱՆ ԷՔՄԷՔՃԵԱՆի մահուան տխուր առիթով Խաչիկ եւ Սալբի Հաճեաններ իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ համայն հարազատներուն:*

*Առ այդ փոխան ծաղկեպսակի 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՀԱՐՈՒՍՏՆԵՐ ԵՒ...

Շարունակուած էջ 14-էն

*գործ, դաւաճան քո պետական այրերը. «ողբամ զ'քեզ, հայ ժողովուրդ, նորէն ողբամ...»:*

*Օ՜, մեր դարաւոր մշակո՜յթը: Ո՞րն է այդ մշակոյթի հայրենիքը, որտե՞ղ է, քարտէզների՞ վրայ, քարերի ու մագաղաթների՞ վրայ: Թէ՞ օրէցօր ստուարացող սփիւռքում, որտեղ նոյնպէս ձեզ նմանները կան: Սթափուենք վերջապէս, հայ մտաւորականներ, ամէնքս, կանգնենք մեր ժողովրդի կողքին: Ժողովուրդն այլեւս յուսախաբ, թեւաթափ է ու մենակ...: Մենք եւս արժանի չեղանք նրանց յարգանքին ու հաւատարմութեանը: Մի՛ վախենաք, ինչպէս տեսնում էք ու համոզւում մէկ աւելորդ անգամ եւս՝ անհնար է կոտրել իսկական, մաքուր հայ ոգին, որ թւում էր, թէ աղաւաղուել, ճզմուել, բթացել է:*

*Ամէն բան չէ, որ յաջողել են. անհնար է: Միշտ էլ կարելի է եւ հնարաւոր է ստիպել հաշուի նստել ժողովրդի հետ: Իսկ եթէ այդ ժողովրդի մէջ անարժաններ էլ կան, ապա դա նոյնպէս մեր մեղքն է: Որովհետեւ մտաւորականը՝ ոչ միջակութիւնը, որ միշտ էլ աւելի շատ է ու յարմարուող բոլոր իշխանութիւններին՝ ինչպիսին էլ որ դրանք լինեն, իսկական մտաւորականութիւնը պէտք է օրինակ լինի իր վարքով ու քաղաքացիական կեցուածքով:*

*Այո, բոլոր մտաւորական-արուեստագէտները չեն, որոնց կեանքն ու գործը ներդաշնակութեան մէջ են, ցաւօք: Արուեստում, որքան որ թոյլ է տալիս իրենց «տաղանդը», մեր բոլոր երազների պաշտպան են, սակայն կեանքում պատասխանատու որոշումներ ընդունելու եւ կատարելու ժամանակ՝ տաքուկ անկիւններ են փնտռում: Իսկ ազգապահպան գաղափարների կրողն ու առաջ մղողը, պաշտպանը մտաւորականութիւնը պէտք է լինի:*

*Խաւարը ժամանակաւոր է: Լուսաբացից առաջ միշտ էլ մութ է: Այդպէս է ստեղծուած այս աշխարհը, որտեղ հայի համար եւս դժուար է ազատ ապրելը: Ապրել նշանակում է ազատ լինել: Մնացած ձեւերը անպատւութիւն են, մարդու գոյութեան անընդունելի ձեւ: Ի՞նչ է, մի՞թէ մենք միակ ժողովուրդն ենք այս աշխարհում, որ անարդարութեան զոհ է: Ուժ գտնենք մեր մէջ, դուրս գանք զոհի կարգավիճակից, դուրս գանք մեր «տաքուկ» թաքստոցներից: Ես գիտեմ, շատերիդ փշրանքներ, մնացորդներ են նետել... լռութեան դիմաց: Դուք լաւ գիտէք այս ճշմարտութիւնը: Դա՛ չէ ձեր արժէքը, մի նուաստանաք: Դուք, ազգի «հայրեր», ո՞ւր էք: Ես գիտեմ ձեր անուն-ազգանուն-հայրանունները, ձեր ծննդեան թուերը, ձեր որտեղ գտնուելը, ձեր որտեղացի լինելը, այդ դուք էք մոռացել եւ «իմաստունի» ամպհովանու տակ լռում էք..., լռում էք..., լռում էք... ու կործանւում ձեր լռութեան մէջ շա՜տ փող ունեցող, մեր փողերով յղփացած մուրացկանների ահից ու թունաւոր շնչից:*

*Ժամանակին Հայաստանի Գրողների Միութիւնը հզօր էր, ու քանդեցին, ջնջեցին բառիս բուն իմաստով: Որովհետեւ թշնամին լաւ գիտի, թէ որտեղ է մեր ուժը: Ջարախնդացիք, նոր ղեկավար բերեցիք եւ ծաղկեցի՞ք աւելի, թէ՞ ջուր լցրիք թշնամու ջրաղացին: Դա ոչ թէ պաշտօնի զօրութիւնն էր, այլ անհատականութեան, նուիրեալ գրողի սրտի եւ մտքի ուժը: Սովորենք մեր սխալների վրայ: Յարգենք մեր նահատակներին: Յարգենք ինքներս մեզ: Յանուն մեր արժանապատւութեան:*

*Ստեղծենք մտաւորականներից, մշակոյթի գործիչներից կազմուած մարմին, հայրենիք-սփիւռք միասնութեամբ, առանց կուսակցական պատկանելութեան, միահամուռ, միասնական մէկ գաղափարի շուրջ (միամիտ բաներ եմ ասում, մե՜նք ուր, միասնութիւնն ո՜ւր...): Ուզում եմ հաւատալ:*

*Առանձին քաղաքական-ռազմական գործիչների հեշտ է շարքից հանել, իսկ անուանի մշակութային գործիչների, հենց իրենց՝ մեր «փառապանծ» կառավարութեան կողմից պատուոյ շքանշանների, կոչումների արժանացած արուեստի գործիչների քաղաքացիական համերաշխութեան դէմ՝ անհնար է սադրանքներ հրահրել: Մենք շատ ենք, նրանք այդքան ուժեղ չեն: Անազնիւ են, դաժան, նաեւ՝ թերուս: Դրանք վախկոտ մարդկանց յատկանիշներ են: Ուժեղ լինենք: Ոչ հայհոյանքներով, այլ խելացի, մտածուած, կշռադատուած, արհեստավարժ մարդկանց յատակ քայլերով ու պահանջներով: Պետութեան դերը այսօր պէտք է ստանձնի մտաւորականութիւնը՝ քանի որ այն չկայացաւ. լուրջ, արհեստավարժ պատմաբանների, իրաւաբանների միասնութեամբ: Այդ «պետութիւն» կոչուածն էլ՝ թակարդում է, փորձենք «օգնել» դրանց:*

*Այսօր աշխարհը բաց է մեր առաջ. նաեւ՝ փակ է, եթէ վախեցած ու լուռ ենք: Այդ «փառապանծ» իշխանութիւննե՛րը, ողորմելի աւազակնե՛րը պէտք է վախենան: Ոչ ոք, ոչ մէկ ազգ, ժողովուրդ չի սիրում հիւանդ, լալկան ու ջարդուած ժողովրդի: Թերեւս միայն խղճահարութիւն կարող ենք ակնկալել: Իսկ օտար իշխանութիւնների կողմից բարեհաճութիւն՝ եթէ դա իրենց երկրի շահերից է բխում: Ճշմարտութիւն է: Մի՞թէ խղճահարութեամբ են ազատութիւն ձեռք բերում:*

*Միայն պայքարով, միայն համախմբուելով: Որովհետեւ, եթէ արտաքին թշնամու դէմ հզօր զէնք է պէտք՝ ուղղակի իմաստով, ապա ներքին թշնամուն յաղթելու, ծնկի բերելու, մեր կամքը թելադրելու համար այլ լծակներ ու միջոցներ կան: Հնարաւորինս անցաւ՝ հասարակութեան համար եւ անարիւն... ամենակարեւորը: Համախմբուենք, համախմբուենք-համախմբուենք: Հաւատանք միայն ինքներս մեզ, հաւատանք եւ արտաքին թշնամին այդքան զօրեղ չի լինի:*

*Հաւատանք մեր ուժին՝ դա է հարստութիւնը, եւ արմատախիլ անենք մեր արիւնով սնուող՝ շատ փող ունեցող աղքատներին:*

## «ԹՈՒՄՈ»ՅԻ ՅՂԱՑՔԸ

Շարունակուած էջ 15-էն

*առաջ տանող ընկերութիւններու, ուրկէ գոյացած հասոյթը կը յատկացուի «Թումո»յի ընթացիկ ծախսերուն եւ անոր կարելութիւնները շարունակաբար ժամանակակից պահելու կարիքներուն:*

*Նոյնպէս կարեւոր է ընդգծել այն իրողութիւնը թէ «Թումո»յի ծրագիրներուն մէջ մեծ կարեւորութիւն տրուած է ուսանողներուն համար, շէնքէն ներս թէ շրջապատին մէջ, ստեղծելու առողջ եւ ներշնչող միջավայր: Կեդրոնէն ներս, ճարտարապետական յատուկ կառոյցին շնորհիւ կան ճաշարանային եւ մարզական յարմարութիւններ: Իսկ շէնքէն դուրս, «Թումանեան Այգի»ի տարածքին, որու պահպանումը եւ գեղազարդումը նոյնպէս ստանձնած է «Թումո»ն, կան կանաչապատ տարածութիւններ, լճակներ, ցայտաղբիւրներ, շատրուաններ, ֆութպոլի եւ պասքէթպոլի դաշտեր, որոնք ոչ միայն կը ծառայեն «Թումո Ակումբ»ի անդամներուն, այլ նաեւ հաճելի զբօսավայր կը հանդիսանան հանրութեան համար:*

*Նախորդող տողերուն մէջ մենք ընդգծեցինք այն, թէ «Թումո» կեդրոնին վերաբերեալ տրուած գնահատանքին գաղտնիքը հարկ է փնտռել նոյնինքն «Թումո»յի պատերէն ներս: Աւելի խորապէս բացայայտելու համար այն երեւոյթը, թէ ինչու եւ ինչպէս Հայաստանի նման փոքր երկրի մը մէջ յառաջ կ'երթան ստեղծագործական մարզի լուրջ աշխատանքներ, աւելցնենք հետեւեալը.*

*Առաջին, Հայաստանի մէջ թէ անկէ դուրս, Հայը ճանաչւում շահած է իր ուշիմութեան բարձր մակարդակով, յատկապէս բնագիտութեան եւ թուաբանագիտութեան բնագաւառներուն մէջ: Ասիկա կարելի է բնորոշել իբր մեր ժողովուրդի* Hardware*-ը:*

*Առաւել, մեր ժողովուրդը ապրած ըլլալով արեւելքի եւ արեւմուտքի մեծ կայսրութիւններու զօրեղ ճնշումներու ազդեցութեանց տակ, իր ինքնուրոյն դիմագիծը կերտելու եւ պահպանելու գոյամարտին իբր զէնք, կառչեր է իր մշակոյթին: Իր ազգային եկեղեցիին, իւրայատուկ լեզուին, արուեստներուն ու ճարտարապետութեան: Սերունդէ սերունդ կուտակեր է մշակոյթ, զտեր ու բիւրեղացուցեր է զայն եւ աւելի ճոխացուցած, փոխանցեր է զայն յաջորդող սերունդներուն: Այս մէկը մեր* Software*-ը կը հանդիսանայ:*

*Այսպէս, մեր ընդհանրական բնատուր մտքին եւ մշակոյթին համադրեալ իմաստութեան շաղախը, «սինթեզ»ը* (collective intelligence)*, կերտեր է մեր ազգային ինքնատիպ կերպարը: Կերպար մը, որ իր գոյութեան գլխաւոր զէնքը նկատեր է ստեղծագործութիւնը, հոգեմտաւոր մշակոյթի զարգացումը:*

*Եւ Սէմ Սիմոնեան, մեր նորագոյն ժամանակներուն, կը հանդիսանայ այս կերպարի հարազատ եւ ակնառու դրսեւորումներէն մին: Իմացական իր բարձր կարողութեամբ, տեսիլքով եւ ուժեղ հայրենասիրութեամբ:*

*Վերջապէս հարց կրնայ տրուիլ, թէ ասկէ յետոյ ի՞նչ:*

*«Ծրագիր Երկու»ն* (Plan B)*, այն պիտի ըլլայ, թէ ինչպէս ծրագրել «Թումո»յի սաներու գործունման յաջորդ հանգրուանը եւ ընկերային ու տնտեսական կեանքի զանազան ասպարէզներէ ներս անոնց ընդգրկումը հայրենիքի մէջ:*

*Այդ մէկը այլ յօդուածի մը նիւթ է:*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

Մասնակից Դարձէք

Պատմութեան

# ՀԲԸՄ 110 ՏԱՐԻ

## Շաբաթավերջի

## եռօրեայ Տօնախմբութիւն

27 - 30 Հոկտեմբեր

2016

**«ՀՈԳԻՍ» Գեղարուեստական Անդրանիկ Ելոյթ**

28 Հոկտեմբեր @ NEW YORK CITY CENTER

**89-րդ Ընդհանուր Ժողով**

29 Հոկտեմբեր @ THE HARVARD CLUB

**110 Ամեակի Ճաշկերոյթ**

29 Հոկտեմբեր @ JAZZ AT LINCOLN CENTER'S FREDERICK P. ROSE HALL

Յաւելեալ մանրամասնութիւններու համար այցելեցէք՝

#AGBU110 agbu.org/110 #UnityIsStrength

## ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան («Միութիւն») Կեդրոնական Վարչական Ժողովը այսու կը ծանուցանէ Միութեան բոլոր իրաւասու անդամներուն թէ Միութեան 89-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի Շաբաթ 29 Հոկտեմբեր 2016-ի առաւօտեան ժամը 10-ին, Միացեալ Նահանգներու Նիւ Եորք Քաղաքի «Հարվըրտ Գլապ»ին մէջ: The Harvard Club 35 W 44th Street, New York.

89-րդ Ընդհանուր Ժողովի գումարման վերաբերեալ միակ ծանուցագիրն է այս: Հետեւաբար, Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրենք որ վերոյիշեալ թուականին անձնապէս ներկայ գտնուին ժողովին համար նշուած վայրը, կամ իրենց փոխանորդագրերը՝ գործադրուած եւ վաւերացուած ըստ կանոնագրի տրամադրութեան, ուղարկեն կամ յանձնեն Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպրին, ամենաուշ մինչեւ 16 Սեպտեմբեր 2016, կեդրոնական գրասենեակի հետեւեալ Հասցէով.

Armenian General Benevolent Union
Central Board of Directors
55 East 59th Street
New York, NY 10022-1112, U.S.A.

## ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Նկատառում եւ վաւերացում Միութեան 2014 եւ 2015 տարեշրջաններու ընդհանուր գործունէութեան տեղեկագրերուն:
2. Նկատառում եւ վաւերացում Միութեան 2014 եւ 2015 տարեշրջաններու հաշուական տեղեկագրերուն:
3. Ընտրութիւն Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու:
4. Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամի մը:
5. Քննարկում վերոնշեալ օրակարգերուն առնչուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ ժողովի աշխատանքներուն ընթացքին արծարծուած կամ ըստ կանոնի ժողովին ներկայացուած հարցերու, ներառեալ կանոնագրի բարեփոխումներ:
6. Քննարկում Ընդհանուր Ժողովի յանձնարարութիւններու եւ բանաձեւերու:

Ի Դիմաց
Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Սարգիս Ճէպէճեան
Ատենադպիր

Պերճ Սեդրակեան
Նախագահ

12 Յուլիս 2016